Կան, ի հարկէ բացառութիւններ, և այդ բացառութիւնն կազմող հոգևորականք, իրաւամբ կարող են առաջնորդ կոչվելու, և հոգևոր և մարդկային ճանապարհի մէջ: Հոգևորական դասից ազգը պահանջում է շատ իրաւացի և չափաւոր գործողութիւն, այն է աշակերտութիւն երիտասարդական խմբին: Մի քաղաքական և իրաւախոհական խօսք, մի անկեղծ ազգասիրական արտայայտութիւն, մի ճշմարիտ հոգևոր խօսք, իբ հրապարակ Աստուծոյ խօսքին համեմատ եղբայր էք, և աղղութեամբ մի:» Հոգևոր առաջնորդի նպատակը պէտք է լինի խաղաղութիւնը, և եղբայրական սէրը, որը պէտք է ներշնչէ նա ազգային մարմնի մէջ: Այն ժամանակ հոգևոր դասակարգը կը լինի կատարեալ անդամ պատուելի քրիստոնէական ժողովի մէջ, և նախանձախնդիր անդամ ազգային միացեալ գերդաստանի մէջ: Հետո չէ ժամանակը, հետո չէ վերջնական բոպէն, երբ ժողովուրդը կը զարդանայ ինքնաճանաչութեամբ և այն ժամանակ, հնչում չի լինի ուղղել անցեալ սխալը:

Այժմ հայը կարօտ է, ոչ թէ անդորձ և լուկ անուամբ հայերի, այլ կատարեալ գործողների, և Կովկասի հայը պէտք է ցոյց տայ թէ նա արժան է հայութեանը, արժան է բարոյապէս պաշտպան լինել իր ընկճած եղբայրների: Եւ այդ քայլը մեզանում կարելի կը լինի անել կրօնական նեղբողոքութեամբ և անկեղծ եղբայրական զգացմունքով:

Պետրոս Եկպուրեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

22 սեպտեմբերի

Վանի առաջնորդների օգտին հանգանակել եմ բարեկամներից 50 ր. 40 կ.: Փոստի ծախքը 40 կոպ. գրս գալով, ուղարկում եմ Ձեզ մնացածը և խնդրեմ ընդունել, տպելով նուիրատու անձանց անունները «Մշակի» էջերում:

Վասիլ Թաչատուրեանց 3 ր. 20 կ., Վանեա Գակավբեանց 2 ր., Կարապետ Մանուկեանց 2 ր., Զաւտա Գրիգորեանց 1 ր. 50 կ., Сергѣй Тарасовъ 2 р., Նիկողայ Խանէլեանց 1 ր., Захаръ Бабеловъ 1 р., Թէոս Վասիլեանց 2 ր., Խաչակ Պարունեանց 3 ր., Զաքարայ Հայրունեանց 1 ր. 20 կ., Մարտիրոս Տէր Մատթէոսեանց 1 ր., Միխայէլ Տէր-Պօղոսեանց 1 ր., Զաւտա Նալբանդեանց 1 ր., Константинъ Статевъ 1 р., Խաչակ Սարգիսեանց 1 ր., Ստեփան Մազմանով 1 ր., Մէլիք Մուրադեանց 1 ր., Александръ Стрѣевъ 50 կ. Նիկողայ Ալախանեանց 1 ր., Պօղոս Հայրապետեանց 50 կ. Աւետիս Բաղիրեանց 1 ր. Սարգիս Ստեփանեանց 50 կ., Օհանջան Շահկիտանեանց 2 ր., Թարխան Տէր-Մանուէլեանց 1 ր. Ալէքսանդր Յովհաննէց 1 ր., Ներսէս Կարապետեանց 1 ր., Սողոմոն Սողոմոնեանց 1 ր., Յարութիւն աղդասարեանց 50 կ., Սէրգէյ Մուրադեանց 1 ր., Զաւտա Ղևոնտեանց 2 ր., Ալլահվերդի Եդիեանց 1 ր., Սամուէլ Համբարցումեանց 1 ր., Համբարձում Տիրոցեանց 1 ր., Միքայէլ Եսայեանց 1 ր., Միքայէլ Առաքսմեանց 1 ր., Յովսէփ Խաչատրովեանց 1 ր., Մարտիրոս Մանուկեանց 1 ր., Յովակիմ Մուրադեանց 1 ր., Եաքար Թումայեանց 50 կ., Աւագէլ Ազաբաբեանց 1 ր., Յակոբ Յարութիւնեանց 50 կ., Պօղոս Հայումեանց 1 ր., Գիւլամբար Սանասարեանց 50 կ.: Ընդամենը 50 րուբլ:

Ղուկաս Խաչատուրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սառցանք ՓՕՓԻՒՑ ս. Կարապետ Պօպովից 2000 րուբլ, որից կէսը յօգուտ «Միացեալ ընկերութեան», կէսն էլ յօգուտ Վանի տուեալների: Այդ գումարը տառցանք Մուհանեանց եղբայրների ձեռքով Թիֆլիսում:

Հոկտեմբերի 4-ին, առաւօտեան ժամը 6-ին, ՀԱՒԱՍԱՐԻ տուրը Մենաս կոչված թաղում, փողոցի մէջ, աւազակները բռնելով մի մրգավաճառի, կամենում են խեղդել Նրան և կողոպտել: Պատահմամբ ճանապարհով անցնում է մի տիրացու, աւազակները տեսնելով Նրան փախչում են, տանելով իրանց հետ մրգավաճառի քամարը և ժամացոյցը: Մրգավաճառը վիրաւորված է:

ՅԻՆՎԱԼԻՑ մեզ հաղորդում են, թէ այնտեղ և Շըվինդիս գիւղերում սաստիկ կարկուտ է եկել և մեծ վնասներ է պատճառել: Շըվինդիսում մեզ տուն կործանվել է կարկտից առաջ եկած հեղեղից:

Մեզ հաղորդում են, թէ ալ. Սարուխանեցը մըտադիր է ՀԱՒԼՍԲԱՐՈՒՄ նուիրատուիններ հաւաքել յօգուտ Վանի տուեալների: Ժողովուրդը խիստ համակրութեամբ է վերաբերվում դէպի պ. Սարուխանեցի ձեռնարկութիւնը:

Հոկտեմբերի 5-ին մի քանի երիտասարդներ Նաւակի վրա գիշեր ժամանակ քէֆ են անելիս եղել, պարեելով Կուր գետի վրա: Նրանցից մի քանիսը հարբում են, և միմեանց հետ կռւելով, ընկնում են գետի մէջ և խեղդվում:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են. հոգևոր ուսումնարանի այժմեան հոգաբարձութիւնը շատ աշխատում է, որ ընկած ուսումնարանը կրկին վերականգնեցնէ. վարձված են ուսուցիչներ և վարժուհի բաւարար առաջնիներով. դասատութիւնը սկսվել է:

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. չը նայելով, որ այս գիւղը բաւմաթիւ գիւղերի կենտրոն է համարվում, բայց ոչ մի դպրոց չունի: Մի տիրացու միայն հաւաքել է իր շուրջը մի քանի երեխաներ և Նրանց հետ ոչ այնքան պարապում է, որքան զբաղեցնում է իր անձային գործերով: Գիւղն ունի դպրոցի հիմնելու, բայց չունի մի առաջնորդ, որ Նրան ցոյց տար, թէ ինչ ձևով և ինչ միջոցներով պէտք էր հիմնել դպրոցը: Եւ այս ամենը այն ժամանակ, երբ Մեղրիի գաւառում են թեմական տեսչի այցելութիւնները, բայց թեմական տեսուչները այդպիսի խոլ տեղերում ոտք չեն կոխում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԴՕԼՕՍ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Երզրումից «Դօլօս» լրագրին գրում են հետևեալը սեպտեմբերի 23-ից:

Ինչպէս երևում է, Թիւրքերի երախտագիտութեան զգացմունքը երբէք չի կորցնի իր բացասական յատկութիւնները. ուժերի մեծահոգութեան շնորհիւ ահա երկու տարի է, ինչ Թիւրքերը օգտում են քաղում վատելու և շինութիւնների վայրից Սոպանլուխի անտառից, որ ուժերին է անցել: Մինչդեռ ուսաց հպատակների նամակները չեն հասնում Ռուսաստան և, ինչպիսի բռնադատութիւն էլ ունենան նրանք, մի և նոյն է, բանվում են Թիւրքաց փոստի մէջ և ոչնչացվում Թղթակցութիւնների հետ այդպէս անողորմ վարվելու առաջը կարելի է առնել միայն այստեղի ուսաց հիւպատոսի շնորհիւ, որ ժամանակ առ ժամանակ ուշադրութիւն է դարձնում Սարիկամիշ մի առանձին մարդ ուսաց փոստը բերելու համար: Ահա այդ մարդը ազատում է մեզ Թիւրքաց պաշտօնից, մեր նամակները ամբողջութեամբ ուսաց փոստատոնը յանձնելով: Թիւրքերը նոյնքան շնորհակալ գտնվեցան դէպի ուսները և այն դերիների վերաբերութեամբ, որոնք անցեալ պատերազմի ժամանակ մի քանի տեղ բռնվեցան: Խաղաղութիւնը հաստատելուց յետոյ յայտնվեցաւ, որ բոլոր ուս գերիները կատորվեցան «Հայրենիքի կարօտից»:

Մեր նամակների վիճակին են ենթարկվում նոյնպէս և Ռուսաստանից մեզ ուղարկված Թղթակցութիւնները. Թէ ուսաց և Թէ հայոց պարբերական բոլոր հրատարակութիւնները, բոլոր մանաւոր նամակները, որոնք հիւպատոսի Թղթատարի ձեռքը չեն ընկնում, հէնց որ անցնում են Թիւրքաց սահմանը, բռնվում են սահմանների պահապանների և, իբրև հեշտութեամբ այրվող նիւթ, գործ են ածվում կաճիէ եփելու համար: Այժմ հարց է ծագում, Թէ միջազգային որ իրաւունքի վրա է հիմնվում բարեկամ կառավարութեան հպատակների պաշտպված դրութեան մէջ պահելը:

Որովհետև Թիւրք-ուսական մանաժողը դեռ և չէ որոշել սահմանադիծը և որովհետև կանոնաւոր յարաբերութիւններ չեն հաստատված երկու կողմերի պահպան կենտրոնատեղիների մէջ, բաւական շատ անկարգութիւններ են կատարվում: Սրա պատճառը այն է, որ երկու կողմերի գործակատարները ժամանակաւոր և անորոշ պարտաւորութիւններ ունենալով, ամեն տեսակ անկարգութիւն միմեանց վրա են գցում: Ուրեմն շատ ցանկալի է, որ շուտով կանոնաւորվին սահմանները և այնպիսի մարդիկ կանգնեցնեն, որոնք պիտանի լինեն սահմանական պահապանների պարտաւորութիւնները կատարելու համար:

Նոյնքան որոշ և խիստ կանոններ պէտք է ստեղծել հողատէրերի համար, որովհետև Թիւրքերից շատերը ուսաց սահմաններից Թիւրքիա գաղթելով և չը կամենալով իրանց հողերը էժան գնով ծախել, իրանց հողերի համար առանձին կատավարիչներ են նշանակում էր շատ դէմս. արկածի էլ տպատում, ուստի փոքրիկ չատս միշտ աչքիս առջև էի պահում. մերի ընդ մերի կարճիկ ուղեկով շունս մատս կանչում և այդպէս ներսն միշտ արիւնն բռնում պարագայի կարևորութիւնը տեսնում էր որ ընկերներս իրարից անբաժան մնանք այդպիսի ժամերում. ինչքան էր լինում մեր գուարճութիւնը երբ ուելի վտանգաւորին տպատած ժամանակներս յանկարծ տատանայ Թէղորան*) էր ձեռն այտ. այն կողմ փարատելով աչքերս երևում, կամ երկչոտ լապտերակը (նապաստակ) ոտքերս տկէն պրծնելով լեղապատառ փախչում տատիկ արագութեամբ և ականջներովը խայտառակուած: Բըրդոտ չատ երդուեալ թշնամին ուշ ուշ էր երևում ցածր տեղերում, բայց երևում, մշուշն տակը երին օգնական առած: Փորի վրա տապիկ պառկում է խոզանի մէջ կամ քարերու, և սպատում է շատի իրեն մերձենալուն. երբ բոլշն յարմար է գտնում, տողալով յառաջ է մատչում և որսի կամ բկէն է բռնում, կամ՝ եթէ տպիտակնք կայ տատիկ արագութեամբ գործը կատարելու կալուզ տեղէն է խածում, դմակէն եմ ուզում ասել: Ասուր մէկը շատն փորը յետ էի ձգացել. նատած խօսում էի ընկերներուս հետ. շունս էլ կողքիս, գլուխը թաթերու վրա դրած քուն ու արթուն էր մէկ էլ տեսայ ոչխարը խրատ. դռոշ տալով մի կողմ. աչքերս լայն՝ գիտում էի, բան չէի տեսնում, բայց եթէ մէկ ոչխարի ականջ յետ յետ ձգուիլը մինչ ինքը ճապկռում էր յառաջ երթալ յետի ոտները ծալուում էին, մինչ առջևիններու վրա շիտակ՝ խեղճը աշխատում էր միւս զէպի ընկերները քաշուիլ. հուսկ մի պոչ օդի մէջ խաղաց, որ և զգայուց ինձ գող ինշամու ներկայութիւնը. ես վազեցի, և յարձակուելու յորդորը

*) Թորամանկ աղուէսը:

գլխու. միջներէս մէկը նատած, միւսներս բոլորնիս իր շուրջը, ոմն փորի վրա երկնցած ու դնչերս ձեռքերուս մէջ առած ու աչքերս նատողի վրա ամկած, ոմն էլ կողքի ընկած ու մէկ ձեռքի վրա գլխներս դրած, ոմն էլ կանգնած, փայտը առջևը իրրև նեցուկ զարկած, այնոր ծայրին ձեռները դրած ու ձեռներուս վրա կուրծքը չանպչեցուցած, ամենքս աչք ու ականջ եղած՝ մեր ընկերոջ շրթներէն, այսպէս ասեմ, կախուած մնում էինք: Նա պատմում էր մեզ օձերու թագաւորութիւնը, նոր բանակ կազմելները, աշխարհէ աշխարհ իրար կռիւ երթալը, թագաւոր կամ թագուհի օձի կռիւի դաշտը արշաւի ժամանակ կամ հանած չինելն ու շինելը՝ որովհետև հպատակ օձեր են նորա կառքը կազմողները և քաշողները, կռիւի ետևից խողած խորափոր հետքերն ու փոշամանը, ինշամիներու իրար տուած տպակալի կռիւն ու ջարդը՝ ուր գլխները գլխատրապէս նոցա երկթիղ լեզուն է եղել, յետոյ ձորերու միջէն արեան հեղեղի գոչալով թաւալուիլն ու գնալը...: Պատմողը հարազատ էր. տում էր թէ մշեցի կամ վանեցի կամ ես ինչ գիտեմ ինչ երկրացի մի մարդ է տեսած եղել այդ անցքը: Մի ուրիշ ընկեր առջինի տեղն անցնելով հետաքրքիր էր անում ջաղաքացիական պատերազմներու գիւղական արարքները: Մի երրորդը զրոյց էր անում թէ ինչպէս այս անուն պատերը այն ինչ տեսարկի կամ քարափի մօտ մի տալ քարի վրա (ներեցէք պէտք է ասեմ) շունչ ու նատել քրիստոս է արել և լսել է որ քարի տակէն ձայն է գալիս. այն քարի տակ խազինա գտնված է եղել թագաւոր: Լոյս աշխարհի ու մութ աշխարհի հետքներուն վերջ կայ: Բայց ոչխարը մեզ կանչում էր. գնում էինք: Ձեմ մոռանում թէ ինչպէս ժայռ, ձորակ, օձ, անյայտ գանձ, պատառ, դև՝ իրար հետ վազում էին մեր երևակայութեան մէջ:

(Կը շարունակվի)

Fonds A.R.A.M

նակում, որոնք չեն հոգում հողերը մշակելու մասին և պարապ նստած են, ապասելով հողերի գնի թանգանալուն, որ յետոյ ծախեն նրանց։ Այդ հանգամանքը անկասկած վատ է ազդում երկրի տնտեսական դրութեան վրա, որովհետև հողերը անմշակ են մնում։

Միւս կողմից ի նկատի ունենալով Եւրոպայի միջամտութիւնը հայոց խնդիրը լուծելու համար, ռուսահպատակ հայերից շատերը ցանկանում են անշարժ կալուածքներ ձեռք բերել Ռուսաստանի սահմաններին մօտ եղած Թիւրքաց Հայաստանի մէջ, որ անկասկած Ռուսաստանի համար քաղաքական կողմից շատ օգտաւէտ է։ Մինչդեռ Թիւրքաց կառավարութիւնը, չը կամենալով, որ իր երկրի մէջ ռուս հպատակները լինեն, աշխատում է Հայաստանից գաղթած թիւրքերին անգլիացի գաղթականներով փոխարինել։ Այդ նպատակին հասնելու համար Թիւրքաց կառավարութիւնը մի կողմից արգելքներ է դնում, որ ռուսահպատակները կալուածներ գնեն, իսկ միւս կողմից Լօնդոնի մէջ եղած իր դեսպանի օգնութեամբ պայմանաւորւում է անգլիացի հողատէրերի հետ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ ռուսները որքան են ցանկանում Ազբիւռնի շէկ գաւակների հաւասարութիւնը, ուրնմն Հայաստանի հիւպատոսները կողմնակերպելու ժամանակ հարկաւոր է նոր կանոններ մշակել ռուսահպատակների իրաւունքները ապահովելու համար։

Որովհետև խօսեցինք Թիւրքերի Հայաստանից Փոքր-Ասիայի խոլքերը գաղթելու մասին, կը նկատենք, որ այդ գաղթականութիւնը կապված է մի քանի ծիծաղելի դէպքերի հետ։ Օրինակ հայերը նկատելով Թիւրքերի ձգտումը գաղթել Հայաստանից, լուր են տարածում, որ քրիստոնեայ նահանգապետ նշանակելուց յետոյ իրանք թողութիւն կը խնդրեն խոզեր պահել և նրանց մորթել։ Հէշտ է երևակայել մահմեդական սարսափը ամեն բան ուտող այդ չորքոտանիի անունը լսելու ժամանակ։ Միւս բանը, որով հայերը վախեցնում են Մահմեդի որդկերանցը, եկեղեցիների զանգակներն են։ Մի քանի հայեր ինձ հաւատացնում էին, որ բաւական է, Հայաստանի Թիւրքաբնակ քաղաքներից մէկի մէջ մի զանգակ բերել և զանգահարել, իսկոյն այդ քաղաքը կը թողնեն բոլոր մօլլաները և նրանց հետևորդները։ Այդ պատճառով անպատմելի պատմում են Թիւրքերին, որ Մօսկվայի մէջ ահագին զանգակներ են շինում և Եւրոպայի և միւս քաղաքների համար և հէնց որ քրիստոնեայ նահանգապետ կը նշանակվի այդ զանգակները Հայաստան կը բերվին։

Սպանդուխի անտառը Ռուսաստանին անցնելուց յետոյ վաճառվայրի այնպիսի պատկառելի է զգացվում, որ օղիի գործատունները գաղարեցրին իրանց աշխատանքները, որովհետև վաճառվայրը չափազանց Թանգ էր։ Նաև Թի արգիլնաբերելը շատ դժուար է, Թէպէտ Հասան-Ղալայի շրջակայքները լիքն են նաև Թով։ Դրա պատճառը այն է, որ եթէ կանոնաւոր բնակութիւն կազմվի նաև Թի արդիւնաբերելու համար, նա տուգված կը լինի իր դուռների կէսը ընծայել զանազան փաշաներին և Թիւրք պաշտօնեաներին։ Արհեստական անտառի տնկելը, խարրերդցի հայերի նման, որոնք բացատապէս դիտդործութեամբ են զբաղվում, նոյնպէս դժուար է, որովհետև Էրզրումի նահանգի օդը և հողը անձեռնտու պայմաններ են ներկայացնում այդ գործի համար։

Ահա այսպիսով քրիստոնեայ ազգաբնակութեան բոլոր օգտաւէտ ձեռնարկութիւնները և աշխատանքները, անցեալ գարերի նման, անպտուղ են մնում վարչութեան և կառավարիչների կամայականութեան պատճառով, որոնք ազգաբնակութիւնը կեղեքում են համարում, այն պայմանով միայն, որ այդ կողմ մինչև անգամ չը հասնի կարկառուն կերակրի մասին մտածել։

ԱՆԳԼԻԱ.

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Անգլիան պատրաստվում է ռազմական միջոցներ գործադրել Թիւրքիայի դէմ։ Դրա մասին Գօրտոմուսից հաղորդում են հետևեալ լուրերը։ Ռազմական ուղարկվում է «օդնական» բեռնակիր նաւ, որի վրա պէտք է միշտ գօրքեր լինեն։ Այդ նաւով կուղարկվի 50 ածուխ պատրաստական պաշարներ և 54 Վեսլինգի միաբանօք։ Բացի այս Լօնդոնից հեռագրում են, որ Ծովակալ Սէյմուր հրաման ստացաւ իր կառավարութիւնից՝ բանակցել իւրաքանչիւր պետութեան նաւերի հրամանատարների հետ առանձին առանձին և երևի այդ բանակցութիւնների ժամանակ անգլիական Ծովակալը կը հաղորդի միւսներին այն նոր հրամանները, որ նա ստացել է իր կառավարութենից։

Անգլիական պատասխան կուսակցութեան լրագիրներից մէկը, որ միջոց ունի հաստատ տեղեկութիւններ ստանալ, հաղորդում է մի քանի լուրեր, որոնք հաստատում են վերոյիշեալը։ Այդ լրագիրը պնդում է, որ պետութիւնների մէջ կատարեալ և վերջնական համաձայնութիւն է կայացել Թիւրքիայի դէմ սահմանական միջոցներ գործադրելու մասին և որ Էդէյեան ծովի մէջ Թշնամական գործողութիւններ կը սկսվին։ Պետութիւնների վճռի իրագործելը կը յանձնվի ոչ Թէ ամբողջ միացեալ նաւատորմին, այլ գոնեա երեք պետութիւնների նաւերին, որոնց ազգութեան մասին ոչինչ տեղեկութիւններ դեռ ևս չը կան և որոնք կը գործեն իբրև Եւրոպայի հաւատարմատարներ։

Միևնոյն ժամանակ Յետխինէյից հաղորդում են, որ Վերնօգօրիական կառավարութիւնը մտադիր է ամենակարճ ժամանակամիջոցի մէջ պատերազմ սկսել Թիւրքիայի դէմ։ Այդ հանգամանքը շատ հասկանալի է։ Եթէ Էգէեան ծովի մէջ կերևան «Ելոքսպայի ընտրած նաւերը, Վերնօգօրցիները գործ կունենան Թիւրքաց այն զօրքերի հետ միայն, որոնք արդէն Ալբանիայի մէջ են, որովհետև Թիւրքաց կառավարութիւնը անկարող կը լինի օգնական զօրքեր հասցնել Փոքր-Ասիայից։

Այսպիսով արևելեան գործերը հասնում են վճռողական րոպէին։ Եթէ սուլթանը և նրա կառավարութիւնը իր ժամանակին խելքի չեն գայ, նրանք ստոփիկ կը պատժվին այն յանդգնութեան համար, որով վարվեցին Եւրոպայի հետ։ Մանաւանդ նշանաւոր է «հաւատարմատար» նաւերի ուղարկելը Էգէյեան ծովը, որոնք անկասկած որոշ և վերջնականապէս վճռված գործողութիւններին նախագիծ կունենան։ Այնու հետև ոչ մի փորձ չի աջողվի Եւրոպական համաձայնութիւնը խանգարելու համար։ Բ. Դուռը այնուհետև գործ կունենայ նոր կազմակերպված պատերազմական նաւատորմի հետ և որովհետև նաւատորմի հրամանատարը անկասկած անգլիացի Ծովակալ կը լինի, կարելի է նախապէս ասել, Թէ ինչ հետևանքներ կունենան արևելեան գործերը, որոնց վճռելու համար անգլիական կառավարութիւնը միտրալիօզներ և գօրքեր է ուղարկում Միջերկրական ծովը։

ՆԱՄԱԿ ԳԱՐՍԿԱՑԱՆԻՑ

Թաւրիզ, 20 սեպտեմ.

Սօմուխ-Բուլախի քրդերի ապստամբութեան արմատը պէտք է որոնել շատ խոր թաղնված մի ծածուկ դաւադրութեան մէջ, որի հեղինակութիւնը, անտարակոյս, պէտք է վերաբերել Թիւրքիային։

Մի քանի ամիս առաջ Կ. Պոլսում գտնվում էր պարոն Սօմուխ-Բուլախ քաղաքից մի քուրդ ազնուական, Համզա-աղա անունով, որը Մահզուռների ցեղապետն էր։ Նրան պաշում էին Կ. Պոլսում իբրև կայսեռւոր, բայց ինչ էր նրա յանցանքը, ինչ բանի համար էր բերված նա,— ոչ ոք չը գիտէր։ Այսքանը միայն յայտնի էր, որ Համզա-աղան յարաբերութիւն ունէր Թիւրքաց բարձր շրջանների հետ և յաճախ տեսնվում էր առաջին վէզիրի հետ։

Երբ Բերլինի վերջին կոնգրէսից յետոյ հայկական հարցը անցաւ Ռուսաստանի և Վերնօգօրիայի հարցերի կարգում, այդ ժամանակ Համզա-աղան մի հրաշքով յայտնվեցաւ Սօմուխ-Բուլախ քաղաքում։ Նա սկսեց, ի հարկէ ծածկաբար, դրգռել պարապատակ քուրդ ցեղապետներին մասնակցել մի ընդհանուր քրդական ապստամբութեան, որ պատրաստվում էր Թիւրքաց սահմանակից հողի վրա Եէյխ-Իբադուլլահի առաջնորդութեամբ։ Եւ այսպիսով, Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանակից քրդերը միախառնվելով, պիտի կազմէին մի ահագին զօրաբիւռ, որի նպատակը պէտք է լինէր արշաւանք գործել դէպի Հայաստան։

Բայց հանգամանքները դործին ուրիշ տեսակ ձև և ընթացք տուցին։

Համզա-աղային ապստամբական պատրաստութիւնները չէին կարող ծածուկ մնալ Սօմուխ-Բուլախի Շահզադէի արքայական նահանգապետի ուշադրութիւնից։ Նա կանչել է տալիս իր մօտ Համզա-աղային, և դնելով նրա առջև մի շղթայ, ասում է. «դու մեր կառավարութեան առջև յանցաւոր ես, վեր առ այդ շղթան և քո ձեռքով անցկացրու քո պատանոցը»։ Շահզադէի անզգոյշ վարմունքը խոչոր պատժվում է։ Համզա-աղան փոխանակ հնազանդվելու նրա հրամանին, մերկացնում է սուրը, և դուրս պրծնելով Շահզադէի տեղեակից, ասում է, իմ պարանոցը պարսկական շղթային չի համբերի»....Մերձաւորներից ոչ ոք չէ համարձակվում բռնել ստահակին։ Շահզադէի դրացը կանչնում երկու պահապան սարվազները կամենում են արգելել նրա փախուստը, բայց երկուսն էլ ընկնում են քրդի սրի տակ։

Մինչև այդ անցքը Համզա-աղան արդէն կարողացել էր յաջողացնել գործը, միաբանելով իր հետ տեղային մի քանի նշանաւոր քուրդ աղնուականներին, որոնց հետ մի քանի հազար ղինեալ ձիաւորներով անցնում են պարսից սահմանը և խմբվում են Թիւրքաց հողի վրա։ Այնտեղ պարսկական քուրդ ապստամբները միանում են Եէյխ-Իբադուլլահի վաղուց արդէն պատրաստած Թիւրքական քուրդ ապստամբների հետ։ Եէյխ-Իբադուլլահը ապստամբների ընդհանուր հրամանատարութիւնը յանձնում է իր Եէյխ-Զադդ որդուն և յիշեալ Համզա-աղային։ Ապստամբները թւով մինչև 5,000, բաժանված մասին ղինված Մարտինի հրացաններով, անցնում են Թիւրքաց սահմանից դէպի Պարսկաստան։ Նրանց առաջին գործը լինում է յարձակվել Սօմուխ-Բուլախ գիւղաքաղաքի վրա, որին առանց ընդդիմադրութեան տիրում են, որովհետև պարսիկները այդ կողմերում զօրք չունէին։

Երբ այդ լուրը հասնում է Առրպատականի մարքաղաքը, Թաւրիզ, տեղային պարսից կառավարութիւնը խիստ արշամարշանքով է վերաբերվում դէպի քրդերի շարժումը, համարելով այն ռուսական ապստամբութիւններից մէկը, որ քրդերը համարեա ամեն տարի գործում են Թիւրք ու պարսկական սահմանի գծի վրա։ Այդ պատճառով քրդերին զսպելու համար պարսից կողմից ուղարկվում է խիստ անշուշտ Թուով հեծելազօր և մի քանի թնդանօթներ միայն, որոնք ճանապարհների վատութեան և ամեն տեղ կամուրջներ չը լինելու պատճառով, մինչև հասնելը, Թշնամին արդէն անցած է լինում Սօմուխ-Բուլախ քաղաքը և անցած է լինում Բենաթի գետաւը։ Այստեղ քրդերը և պարսիկները հանդիպում են միմեանց։ Պարսիկները լաւ պատրաստված չը լինելով, և Թուով համեմատաբար փոքր լինելով, յաղթվում են։ Ոգևորված այդ յաջողութեամբ, քրդերը սկսում են իրանց արշաւանքը առաջ տանել դէպի Մարագայ, որ այնտեղից անցնելն հարուստ Թաւրիզ կողոպտելու։

Թաւրիզի վախտրըմն (որ Շահի թագաժառանգն է) նոր է հասկանում, որ քրդերի արշաւանքը կատակ չէ, պէտք է լուրջ ձեռնարկութիւնների դիմել նրանց զսպելու համար։ Նորից ուղարկվում են բաւական մեծ Թուով հեծեալ և հետևակ զօրք։ Թէև հետևանքը տակաւին յայտնի չէ, բայց տարակոյս չը կայ, որ պարսիկները վերջապէս կը ջարդեն քրդերին, գժբաղդաբար մի քանի գաւառներ նրանցից աւերակ դառնալուց....

Այդ ապստամբութեան գլխաւորը, ինչպէս յիշեցի Եէյխ-Իբադուլլահն է, մի ֆանատիկոս հոգևորական, որ ամբողջ քանի տարի է անպատիժ կերպով աւերում է Հայաստանի արևելեան գաւառները։ Դա մի յարմար գործիք է Թիւրքիայի ձեռքում ամեն տեսակ եղեռնագործութիւնների համար։ Թէ ինչ յարգանք է վայելում այդ հոգևոր առաջնորդը քուրդ ցեղերի կողմից, բաւական է այն փաստը միայն յիշել, որ այն օրը, երբ Եէյխը բաղ-

Նէրք է դնում, քրդերը բաղնիքի ջուրը որպէս սրբութիւն բաժանում են իրանց մէջ և վարդաջուրի փոխարէն սրսկում են իրանց մօրուքի վրա։

Քրիստոնեաների այդ դաշինքը ամեն տեսակ չարագործութիւններ կատարած է հայերի և տարբերութիւնների վերաբերութեամբ։ Մի քանի տարի առաջ նա ատերեց մի հոյակապ և շէն վանք նրա քարերը իր տան շինութեանը գործածելու համար։ Այդ վանքի գաւիթում ներսորականները տէրտէրականները կռիւ էին բռնել իրանց պատերազմներին և եպիսկոպոսներին, նրանց գագաղների մէջ դնելով մի մի հատոր, մագաղաթի վրա գրված, Աստուածաշունչ գիրք։ Նա քանդել տուեց բոլոր գերեզմանները, գագաղները այրեց, տարր գրքերի չնա մնաց։ Մի և նոյն Եէյխ-Իբադուլլահն էր, որ ռուս Թիւրքական պատերազմի ժամանակ Արտահի և Ալաշկերտի գաւառները անպատմելի գազանութիւններ գործեց, Հինգ-վեց հայերին կոտորել տուեց, Բարդուզիմէոս առաքելի տարուստ վանքը կողոպտեց և առաքելի տարբ շիրիմը քանդել տուեց։ Եւ այդ բոլորի փոխարէն տասնեակ շքանշաններ, մեծամեծ պարգևներ Սուլտանից, տասնեակ եւրոպական զէնքեր և դինուորից վայրենի քրդերին։

Այստեղ զանազան կերպով են բացատրում շէյխ այժմեան ապստամբութիւնները պարսից հողի վրա։ Ոմանք ասում են, Թիւրքաց կառավարութիւնը, տեսնելով Բերլինի դաշնագրի գօրութեամբ Ղօթուրը տալ Պարսկաստանին, այժմ կամենում է քրդերի ձեռքով յետ խլել եթէ ոչ Ղօթուրը, գոնէ պարսից այն գաւառները, որ բնակեցրած են քրդերով, որպիսիքն են Սօմուխ-Բուլախի և Սինէյն։ Ոմանք ասում են, Եէյխի արշաւանքը պատրաստված էր Թիւրքաց Հայաստանի համար, բայց նա ցանկալով, որ Պարսկաստանի քրդերն էլ միանան Թիւրքիայի քրդերի հետ, աշխատեց պարսից քրդերի մէջ ապստամբութիւն յարուցանել, որովհետև փորձով գիտէր, որ Պարսից կառավարութիւնը Թոյլ չի տայ իր հպատակ քրդերին անցկենալ Թիւրքաց հողի վրա և Հայաստանում աւերմունք գործել *)։

Թէ այսպէս Թէ այնպէս, ամեն նշաններից երևում է, որ այս բոլոր գործողութիւնների մէջ խառն է Թիւրքիայի ձեռքը, եթէ ոչ, ով պիտի զինուորէր աղքատ քրդերին եւրոպական ընտիր զէնքերով, որտեղից և ինչ միջոցով ստացան այդ զէնքերը։ Բացի դրանից, Եէյխ-Իբադուլլահը յայտնի է, որպէս Թիւրքաց կառավարութեան մի լաւ գործիք և իր ծառայութիւններով շարունակ քանի տարի ապացուցել է այդ։

Ծարակոյս չը կայ, որ Պարսից կառավարութիւնը քրդերին զսպելուց յետոյ, նրանց բոլոր վրնասների և անկարգութիւնների մասին պատասխանատուութիւն կը պահանջէ Թիւրքիայից և այդ առիթ կը տայ դիւանագիտական մի նոր բանակցութեան արևելքի վերաբերութեամբ։

Թիւրքական Հայաստանը կը շահվի դրանից։ Եւրոպան գուցէ այժմ կը հաճարէ, Թէ ինչ են կրել խեղճ հայերը վայրենի քրդերից, որոնք յանդգնում են մինչև անգամ Պարսկաստանի նման մի հզօր պետութեան գաւառները անպատիժ գործել իրանց բարբարոսական ապստամբութիւններով։

*) Ռուս-Թիւրքական պատերազմի ժամանակ պարսից կառավարութիւնը ամեն միջոցներ գործ էր դնում, որ արգելէ իր հպատակ քրդերին անցկենալ Թիւրքաց հողի վրա, և միանալով Թիւրքահպատակ իրանց ցեղակիցների հետ, պատերազմել ռուսների դէմ։ Նրանք որ գաղանի կերպով անցան, վերջը սաստիկ պատժվեցան կառավարութիւնից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 Հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 82 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր. 50 կ., երկրորդ 212 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 90 ր. 62 կ., ասկի 8 ր. 12 կ., Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 23,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 205 մարկ, 75 պֆ., փարիզի վրա 255 Ֆրանկ 50 սանտ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենտրոնական Գրավաճառանոցի հրատարակութեամբ այս օրերս լոյս տեսան Սահմանուռս ուսուց քահանայ Տէր-Սահմանեանցի աշխատասիրած «Սկզբունք քրիստոնէական ուղղափառ Հայաստանեաց եկեղեցւոյ» դասագրքի երկրորդ տպագրութիւնը հետեւեալ յաւելուածներով. Համար. 11. Յակոբ Նահապետի որդիքը. 12. Յովսէփը բանտում. 13. Յովսէփի փառքը. 14. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս. 15. Յովսէփի եղբայրների երկրորդ գալուստը Եգիպտոս, 16. Թէ ինչպէս եղբայրները ճանաչեցին Յովսէփին. 17. Յակոբի Եգիպտոս տեղափոխուիլը:

Աղօթք վասն Թագաւորի «Խաչի քո Քրիստոս», «Աւետարան խնամոց» և «Հօրէ» շարականները դասաւորուած են իրանց տեղերում պատմու Թեան խմատին համաձայն: Նկարագրութիւն ոսնալուսյի Հանդէսի ու Թուարկութիւն ի պատիւ սրբոց Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի տահմանուած ծեսերի: Գինը ըստ առաջնոյն 50 կոպէկ է:

Վերջապէս Հարցմունքները, որոնք առաջին տպագրութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ ամփոփուեցան դրքերի վերջումը առանձնապէս:

—

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառւում է նոյն գրավաճառանոցում «Նոր դասագիրք Թուաբանութեան» Գ. Վարձելեանի, գինն է 70 կոպէկ:

—

		Ր.	կ.
1.	Փոլովրզական այբբենարան	—	5.
2.	Տէր-Դաւթեան Մայրենի լեզու ա. մ.	—	35.
3.	— — Մայրենի լեզու բ. մ.	—	40.
4.	— — Մայրենի լեզու գ. և դ. մ.	—	70.
5.	Ագայեանց ուսումն Մայրենի լեզուի	—	15.
6.	Ս. Մանդինեան Նահապետական և Հայր. աշխար.	—	60.
7.	— Ազգային բնաւանեկան աշխարհ ա. մ.	—	25.
8.	— — Դիւցազանց. աշխարհ	—	30.
9.	— Ազգ. ու բնաւն. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ	—	70.
10.	Տէր-Դաւթեան գասագիրք ռ. լ. Русское Слово	—	45.
11.	Ագլաղեան Գ. Ա. Ե. Նախակրթանք Հ. լեզուի մ. ա.	—	40.
12.	Եղիշէ, պատմութիւն Վարդանանց	1.	—
13.	— Նոյն Հատարակ կազմի վրա	—	20.
14.	Տէր-Սարգսեան Հայերէն վարչաշարադրութեան օրինակ.	—	20.
5.	Պալասանեան Քերականութիւն Մայրենի լեզուի	—	50.

Երկրորդական դրքերի գնողները «Կենտրոնական գրավաճառանոցից» նշանաւոր զիջումն են առնում:

Մի մշտավճի պարոն, Յովհաննէս Եսայեան, որ ՈՒՍՈՒՑՈՒԻԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ անունն վերհատուց ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ, ցանկանում է ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԻԹԵԱՆ և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ հրգեցողութեան ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ստանալ: Հասցէն. Թիֆլիսի Հայոց կենսատօրիա, Հարցնել Յովհաննէս Եսայեանին:

4—8

ՎԱՐՁՈՎ է տրւում 6 ՍԵՆեԱԿ ԽՈՀԱՆՈՑՈՎ, ՆԵՐՔՆԱՏՆՈՎ և այլ յարմարութիւններով: Մանուանք յարմար է ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար: Նօթաշէնակայա փողոց, Խակ ՓՈՒՂԻՆՕՎԻ առուն: Ինչ մասին կարելի է նոյն տեղը տեղեկանալ:

2—2

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ տասդվեցաւ ՇՕԿՈԼԱԴ ԵՒ ԿԱԿԱՕ ՖՐԱՑ

9—20

Մախտում է մի ՏՈՒՆ ԱՑԻՒՈՎ, ԵՒ ԲԱԼԿՈՎ. 450 սաժ. մեծութեամբ. դանւում է ՎԵՐԱ, ԱՐՁԱՆԻ ՁԱԽ ԿՈՂՄԸ, բարձրութեան բան: Բացի այդ նա ... սաժ. ՀՈՂ. միասին և մաս մաս:

3—3

Բ. Կ. ԵՍԿՈՎՕՎ.

ԵՐԿՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ յայտնում է իր կլիենտներին, որ նա փոխեց իր հին ԲՆԱԿԱՐԱՆԸ և այժմ բնակվում է Երեվանսկայա փողոցի վրա, տուն Ակիմանդր Բարատնասովի № 12:

2—3

ՎԱՐՁՈՎ տրվում է ՁՈՐՍ սենեակից բաղկացած մի բնակարան, խոհանոցով և ներքնատնով Օրբէլեանների փողոցի վրա № 4, ներքին յարկում, Ցակոբ Դանդուրովի տանը:

ՎԼԱԴԻԿՕԳԿԱՍՏԱՆ ՕՂԻՒ գործարատպահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒՒ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մարքված ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՁԻ և ԲՈՒԼՄԱՐԻՆԳ: Շիշը ամենով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամէն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջողութիւն է անում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՑՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարաններից մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որը արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Մխալսկիան կամուրջի վրա, Ցնոսարնայա հիւանոցի տակ, Լիխտենհոֆու տանը, վաճառվում արձանի դիմացը: 8—8 (2 շաբ.)

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՕՐԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գաւրօնակի կանոնց և ժանկարարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շաւեմ բօրակի վեներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.. Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգեր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուաով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Շաւէմբօրակի վեներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գաւրօնակի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիրիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուաով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաւէմբօրակի և Աստուածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգեր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Աստիճարոյժ Օրբելեան աղքատ հիւանդներին քժշկանոցի տոմսակով ընդունում է իր տունը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը քժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Քժշկանոցի դիրեկտօր Լիսիցեվ:

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՕԿՏՕՐ ԵԱԿՈՒԲՕՎԻՉ շաբաթական է ընդունել վեներական և մի-ջիլիստիական հիւանդներին ընդունել երեքշաբթի օրերը առաւօտեան 11 ժամից մինչև 2 ժամը գիշերվինակի փողոց, Մուխրանովառուն: 2—6

Դուրս եկաւ մամուլի տակից «Մանկական ձայնագրեալ երգարան» խմբագրութեամբ Սղնիկ քահանայի: Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի: Ընդունուած է Նախարանի գպրանոցում և Թիֆլիսի վիրաբուժի բարձրագոյն ծրագրով լինելու պարտաւոր ուսումնարանների: Վաճառվում է բոլոր ուսումնարաններում: Վաճառվում է բացառապէս Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում. գինն է 40 կ. դրամով աձողներին գիջումն կը լինի: 2—10

Ֆ. Կ ՋԱՄԼԻՆՍԿՈՒ ԴԵՂԱՏԱՆ կից Մխիթարովսկաց փողոց Տ. ԿՕՏՐԻՆԻ: Ամենայն օր ընդունվում են առաւօտեան 1 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը ներքին, երեխայական, ջղային, վիներական և կաշու հիւանդութիւններ ունեցող հիւանդներ: 2—6

Ընդունում եմ ամէն տեսակ պատուէրներ ԿՈՆՖԻԿՏՆԵՐԻ, ՊԼԻՕՁՆԻ, ՍՈՒՒԹԱՐԻ գոնատան տեսակի, մոտքաթի, և բնաւոր տեսակ ՖՐՈՒՏՕՎԻ ԿՈՆՖԻԿՏԻ, և ամէն տեսակ կոնդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվին ամէն ճշտութեամբ, և խոստանում եմ կարող են դրվել ինձ հետևեալ հասցեով, Въ Тифлисѣ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ. փոստային կոնֆիկտ պատուիրողների ճանապարհածախսը ինձ վրա եմ առնում,

Մ. Համբարձումեանց.

22—50

ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՖԻԼԻՊՈՎԻՉԻ ԵՒ ԸՆԿԼՈՒՏՆԵՐԻ չորս ամսվայ գործունէութեան հետևանքները. (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Գիշերվինակի փողոց, տուն Կ. Ա. Չուբալովի, Թիֆլիսի կլուխի մօտ: Բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:

10—10

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրավաճառութիւններում Ս. Մանդինեանի հետևեալ գասագրքերը.

1. Ազգային Բնաւանեկան աշխարհագ և Այբբենարան (առաջին ուսմունք և բնթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը աւսուցչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ազգային Դիւցազնական աշխարհ (առաջին ուսմունք և բնթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. առաջին ուսմունք և բնթերցմունք (դ. տպագրութիւն) . . . . . 65 կ.

ՓԱՐՕՍ ՀԱՑԱՍՏԱՆԻ եռամսեայ պատկերազարդ հանդէսն կը հրատարակուի 1881 թուականին չորս անգամ, այն է՝ Յունուարին, Ապրիլին, Յուլիսին և Հոկտեմբերին: Նորա իւրաքանչիւր տետրը կը պարունակէ իւր մէջ 3—4 քառածալ թերթ 12—16 պատկերներով, նոյն ձևով, ինչպէս հրատարակուեցաւ մինչև յայսօր:

ՓԱՐՕՍ ՀԱՑԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիսի նիւթն, ուղղութիւնն, տպագրութեան գեղեցկութիւնն և պատկերաց բնաւորութիւնն կը մնան անփոփոխ ինչպէս էին մինչև յայժմ:


Տարեկան բաժանորդագրութեան գինն, հանդերձ առաքմամբ, է 5 ռուբլի կանխիկ վճարելիս: Բաժանորդագրութիւնն ընդունվում է այս հետևեալ հասցէով: Москва, Меньшикова башня, домъ Милованова, Его Превосходительству Издательницѣ армянскаго журнала „Маякъ Арменіи“ Софьѣ Мсеріанцъ.

Ուսուցիչներ և Հայք կարող են բաժանորդ գրուիլ բաց ի խմբագրութենէն՝ նաև ներկայ ամի պատուիրի գործակատար մօտ, և ի Տփղիս՝ Կենդրոնական և Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցներում, և ի Կիևաստ՝ Պ. Աղաթ Թումանեանցի մօտ:

ԵԹԷ «ՓԱՐՕՍԻ» 1880 ամի պատուիրի բաժանորդքն բարեհաճին նորոգել իւրեանց բաժանորդագրութիւնը և առաջիկայ 1881 տարւոյ համար՝ մեր հանդիսի հրատարակութիւնն ապահովուած կը լինի:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՍՈՓԻԱ ՄՍԵՐԵԱՆՑ

1—10



Կ. ՊԱՆՑԵՐ, ՏՏԱՄՏՆ-ՍԿՉՅԱՑ ՓՈՂՈՑ տուն ՕՄՈՒՐԶԱՕՎԻ: Ունի ճ մեծագոյն ձևերով մեքենայ ձեզօնի համար առաջարկում եմ պատուիրի հաս



րակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁՈՒԹԻՒ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳԻՐՔԻ ՇՐՋԱՆԱՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐԻ, չափագանց էժան գներով, այսինքն Ձեռքի մեքենաներ 12—5 րուբլ: Ոտքի 50—80 րուբլ:

19—52

Дозволено цензурою Тифлисъ, 8 Октября 1880 г.

Տպարան եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ

Fonds A.R.A.M

№ 180 Հոկտեմբերի 10 (22) 1880 Հոկտեմբերի 10 (22) № 180

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն ժամանակ։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ ուսանողութիւնը մայրաքաղաքներում։— Ներքին տեսութիւն։ Նամակ Շամախուց։ Ներքին լուրեր։— Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։— «Մշակի» խնդրիները։— Յայտարարութիւններ։ —Բանասիրական։ Բաղուածք մի ձեռագիր յիշատակարանից։

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Հայ ուսանողութեան քանի մի ներկայնները գնում են Մոսկվա կամ Ս. Պետերբուրգ և նրանք միշտ վերադառնում են նոյն նեղ-հայեաց, անզարգացած, ինքնուրոյն մտածողութեանը անընդունակ, հասարակութեան մակերևոյթի տակ մտաւորապէս և բարոյապէս ընկնող անձնաւորութիւններ։

Ինչ է այդ անմիխիթար երեւոյթի պատճառը։ Մեր կարծիքով պատճառն այն է որ հայ ուսանողութիւնը անկարող է լինում մայրաքաղաքներում ազատապէս զարգանալու, որովհետև հէնց որ մի նոր ուսանող գալիս է, նա իսկոյն ենթարկվում է հինների ազդեցութեանը, իսկ հիններն էլ մէջ կայ մի այնպիսի խմոր, որ մոցրած է եղել այս կամ այն պաշտած քուրմի աշխատութեամբ։ Իւրաքանչիւր մայրաքաղաքի հայ հասարակութեան մէջ կայ մի որ և է հայ քուրմ, որ բռնատիրապէս բարձում է իրան շրջապատող ուսանողների վրա իր նեղ, սահմանափակ, հնացած, փտած, եղուկ տակտիկան, անարգելու հայոց-քները, չէ թոյլ տալիս որ երիտասարդ ուսանողը անհատապէս զարգանայ, այլ մտածի, ինչպէս ինքն է մտածում, նայի աշխարհի վրա ոչ թէ իր սեփական աչքերով, այլ ուրիշի աչքերով, չը զարգանայ սեփական փորձով, այլ ընդունի պատրաստ, ասանդական գաղափարները, արդէն կազմված հայեաց-քները, չը կանգնի իր սեփական ոտների վրա, այլ փոքրիկ մանուկի պէս սանձելով կապված մնայ դայեակ....

Քուրմը, ուսանողների նեղ-հայեաց առաջնորդը լինում է կամ հին ուսանողներից, կամ մայրաքաղաքում ծառայող և այնտեղ միշտ ապրող հայ պաշտօնեաներից։ Հէնց որ ուսանողը գալիս է, նա պարտաւորութիւն է համարում ներկայանալ այդ սեռակ քուրմին,—և ահա նա իսկոյն ընկնում է նրա ազդեցութեան տակ.... Ընտրած քուրմը ամենից արդէն սկսում է գնեղիկ դասատուութիւնը. բամբասանք, թերահաւատութիւն դէպի ընկերները,ատելութիւն դէպի այլակրօն արիւնակիցները, փտած, հնացած, աւանդական դաղափարների անպայման պաշտելը, նիհիլական, դրամական գործին շողոքորթելը, կեղծաւորութիւնը,—ահա այն դպրոցը, որի մէջ կրթվում է ուսանողը աւելի շատ, քան թէ համալսարանի, ուսանողութեան շրջանի և մայրաքաղաքի հասարակութեան մէջ։

Դիցուք քուրմը ատում է այս կամ այն ուղղութիւնը, ասենք ատում է «Մշակի» լրագրի ուղղութիւնը,—և երիտասարդ ուսանողի բարոյական պարտաւորութիւնը, նրա դոյութեան անհրաժեշտ պայման է դառնում քուրմի ներկայութեամբ ամեն օր ծաղրել «Մշակը», դորանով զուարճացնել նրան, ամեն յարմար դէպքում յարձակվել աւանդի ուղղութեան դէմ, ծիծաղել նրա վրա կրկնելով «երևի սա էլ «Մշակն» է կարդացել» և այլն.... Քուրմը ուրախանում, խնդում է, նրա սրտին «դղ է քսվում», ուսանողը հաճելի է նրան ծաղրելով իրան աւելի կուլտուրական։

Ամենք մի ժամանակ մեր սեփական ականջներով լսած ենք հետևեալ բարոյական դասատուութիւնը, որ տրվում էր քուրմի բնթրանից երիտասարդ ուսանողին. «երբ որ մէկին կամենում էք ծիսաս հասցնել, պէտք է նրա հետ բարեկամանաք, նրա սիրտը մտնէք, աշխատէք նրա սրտակից բարեկամ դառնալ, և այսպիսով նրան փոս փորէք։» Ընտիր ուսանողը սկզբից զայրանում է և ակամայ բացականչում։ «Դայց դա անազնուութիւն է, պարոն։» — «Այո՛, անազնուութիւն է, պատասխան է տալիս քուրմը, բայց աշխարհիս բանը այսպէս է։»

Ուսանողը փոքր առ փոքր ենթարկվում է այդ անազնիւ ուղղութեանը։

Քուրմը շատ անգամ ինքն հարուստ մարդ չէ, բայց մի որ և է կրէտոսի մտերիմն է, նրա առաջնորդն է, նրա խորհրդատու է, նրա աջ ձեռքն է։ Նա գրաւում է աղքատ ուսանողին, խոստանալով նրան նիւթական օգնութիւն ուրիշի քսակից, հարուստ վաշխառուի կողմից, այսպիսով իրան աւելի կուլտուրական դարձնելով։

Ուսանողը փոքր առ փոքր ենթարկվում է այդ անազնիւ ուղղութեանը։

Քուրմը շատ անգամ ինքն հարուստ մարդ չէ, բայց մի որ և է կրէտոսի մտերիմն է, նրա առաջնորդն է, նրա խորհրդատու է, նրա աջ ձեռքն է։ Նա գրաւում է աղքատ ուսանողին, խոստանալով նրան նիւթական օգնութիւն ուրիշի քսակից, հարուստ վաշխառուի կողմից, այսպիսով իրան աւելի կուլտուրական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՂՈՒԱԾՔ ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Հէյի մեր հայրենիքի ձմեռը։ Սիրում էի այն ժողովուրդի կեանքը. այժմ աւելի քաղցր է ինձ իր յիշատակը, որովհետև այժմ մանուկ օրուան տեսածը մտածելով ու քննելով ըմբռնում եմ թէ այդ կեանքն էլ մի աւելի հնագոյն և աւելի սրիալական կեանքի աղօտ յիշատակութիւնն է եղած եղել։ Այո, իր գաշտը, իր աշնան սերմը, ուսախ և գալ գալնան յոյսը, բարերար Հէյին աւանդ տալով որ տածէ ու խնամէ և պաշպանէ ցուրտ Հիւսիսի փչմունքներէն, Հայ գիւղացին կողքին ընկած՝ չորս հինգ ամիս հանդստանում է։ Այդ պարապութեան երկայն ու անդորրաւէտ ժամերում, երբ տաք դոմում, անասնոց խաղաղաւէտ դազարի մէջ քէֆ ընկած իր թաղիքներու վրա՝ ձեռքը ծնօտին մտածում է մի կախարդական վերացութեան մէջ մեր գաշտի գիւղացիները, նոր յիշատակներ կամնց կամաց գլուխները վեր են առնում իրենց ալքերէն, զգենում են իրենց գրաւիչ կերպարանքները՝ և իրենց բոլոր հմայքներով պատճառած երևում են նորա աչքին. այստեղ գարով ու առուտուրով յղփացած՝ կանդնել է կարմիր ձին ու սանձն աշխարհի երկաթէն է ծամռուած, կարծես փշրել է ուզում. այնտեղ ապիտակ կամ պիսակն է կանգնած՝ ոտերն ու գեղեցիկ անդամներովը, մեծ մեծ աչքերէն կրակ է թափում, ու քաւամած բաշը քամի տալիս՝ գլուխն անդադրում շրուշակը շրշունչ է անում. մէւս անդ Սևը՝ աչքն արիւնուռշ, քիթը ծխաշունչ՝ ոտ ասես գոյզ հնոց է վառուած՝ կասկարմիր կրակով, անշամբեր ոտով գետինն է դոփում։ Կողը վերցնում է գիւղացիս, շիւ կամ նրսում է. արևին է նայում, օրնոր պատի վրա նորան ժամի տասը կամ տասնմէկին է գոյց տալիս։

—Ծոյ,— կանչում է,— ձին թամքէ. փոկերը պինդ պոչն քաշիս. հանգստանէ, լաւ. իմայնար։— Ինքը մտնում է տուն, կոխիկ հագնում ու ամրանում է հարսի կամ քրոջ օգնութեամբ. բուխարի փափախը, կամ հասարակ գառնէնին ձեռովը թափ է տալիս, ծայրը ներս զարկում այս կամ այն ձեով, վոքր ինչ աջու ականջի վրա թեք գլուխն է դնում՝ քթիկը սրտում. պեխերն ոլորում և մի քառորդ ժամ չանչած՝ կարիճը ձիու վրա է, մականն ու ճոկանը ձեռքում։ Գալին կերած ու մաքի անկինէն լոյն եղած երիւարը զգում է թէ չէ իր վերնակի ոտը աւտոմատով դնելը՝ էլ չէ ոտատում, թըռչում է. խաղում է փռալով և փռնչելով, ու սանձր կոծելով։ Գիւղի եղրում, դաշտի վրա, երկու բանակ եղած կանգնած են թուով քսան և աւելի ձիաւոր. իրարից մի նետընկէց հեռու կը լինին։ Բարձր գոմերու ու ամերու տանիքներու վրա խռնուած են մարդիկ, արք ու կանայք, ազատ տղէք ու աղջիկ մօտիկ գանուող խոտի դիզանու վրա անգամ չտւարաշ տղէք բազմած են հանդիսատես։ Կատարուղը Ջերիճն է. կարծեմ մեր պապերու մականախաղը։ Ադատ աղջիկներու և նոր հարսներու սիրտը դող է ընում, եթէ մրցողներու մէջ է իրենց սրտի սիրելին. մրդոյի ուշքն ու միտքն էլ ուցա վրա է. իրեն է կանչում բոլոր ճարպկութիւնն ու արիւնութիւնը, իր համար աշխարհի հաւատար է իր գողտր սիրոյի գաղտնի դրուատը։ Գնում է մէկ խմբէն մի ձիաւոր՝ թեթև խթելով իր անդրուարը և ձիէնը պատառելոյ. նոր Գէօռղլի, որ փորձում է ծնկաչոր ձեի ականջն փոշի հանել, ինչպէս նա տղմատ արտէն էր հանում, ուր գիտմամբ մի քանի օր ջուր էր կապել տուել. և որդան եթէ մտնենայինք ու ձիու սմրակներէն օդի մէջ նետուած կտորները գնէինք, կը տեսնէինք որ քարի պէս այնպուցած կտորի մէկ երեսը հողով բռնուած է։ Այնքան մտնում էր հանդիպակաց խմբին՝ որ մականն արձակելով հասցնել կարողանայ ուղած մարդուն, նետելը, ձախու ձեռքէն ճօկանն աջու մէջ առնելը. ձիու գլուխը ոլորելը և բաշի վրա կորանալը, չը ասելը, մի գոյզ աստղատնիգ հրեղէն կենդանու կղերուն հաղցնելը և ձեի փոխորկի մէջ խառնուիլը մի գործ է. եռանդն շանթի արագութեամբ պրծել գալու է հակառակորդը՝ ծնկներու մէջ ոզմելով հուժկու ձին, որ որքան իր վրա ամուր գասուած է լինում իր սիրը՝ ինքն այնքան աւելի ուժ ու թև է առնում. մականը, մէջտեղէն բռնած, գլխու վերև խաղցնում է օդի մէջ կորիճ ձիաւորը, չայ չայ դոռալով. երբ բաւական մօտենում է առջևէն փախչողին, նետի նման սուրացնում է իր ձեռքէն գլխդը ուսախ՝ լերդի մէջ տեղը նշան առած. սա, որ աչքը միշտ դէպի ետև ունի զարձուցած և աջը օդի մէջ պատրաստ կամ ճօկանով շեղեցնում է հարուածը իր դէմ դրած նպատակէն, կամ աջովը կամ երբեմն խակ, եթէ շատ աջողակ է, ճօկանի կեռովը բռնում է այն օդաչու գէները, կամ ձիու փորի տակ մանելով թողնում է որ անասունի դիմաց վերևէն վազով անցնի, կամ վերջապէս եթէ իր ձին թռչուն է ու թշնամուինը հասնել կարող չէ նորան, զուր կը նետէ ախոյանը շատ անգամ իր երկաթածայր գաւազանը օդի մէջ. կամ շատ շատ ձիու գաւակին կը հասնի, կամ կկրկնի ու ձեի մէջ կը ցցուի խայտառակուած։ Իսկ եթէ այդ հնարներէն ոչ մէկը չաջողի առջևինին, այն ժամանակ աշագին գիմացով կընդունի գաւազանի բութ ծայրը իր պառկին. կարող է երբեմն պատահիլ որ աչքերը մթնանին, շունչը չանգստանի ու ասպատանդները թողած՝ փռուի ձեի վրա. Տէր մի արասցէ՝ եթէ յանկարծակի ականջկոթին դիպչի փայտը, սև մութը յաւիտեան կը պատէ նորան. Բայց արդար ու խազազաւէտ դիւղացին զգոյշ է. այդպիսի դառնութեամբ չի աւարտիլ իր ուրախալից հանդէսը. խիբէն մէկ հազիւ թէ լսուի այդօրինակ պատահար։ Վերջապէս երբ հալածողը արձակում պրծնում է իր մականը

Fonds A.R.A.M

պիտով անենկատելի կերպով բա-
րոյապէս կապում է նրան, պայ-
մանն է դնում նրան կուրօրէն
կերպով հետևել իր ուղղութեանը
և այդ հնազանդութեան փոխա-
րէն նիւթական օգնութիւն սր-
տանալ, գնալ կատարելագործ-
վել արտասահմանում, և այլն....

Ահայց վայ այն ուսանողին, որ
մի ժամանակ խնամակալութեան
տակ է եղել, իսկ յետոյ յան-
կարծ ազատվել է այդ ճնշող,
բթացնող, անբարոյականացնող
խնամակալութիւնից,—նրան կը
հալածէ քուրմը ամեն տեսակ
ներելի և աններելի միջոցներով,
անանուն, յիշոյներով լի նա-
մակներ կուղարկվեն նրան քա-
ղաքային փոստով, մատնութիւն-
ներ կը լինեն ուսանողի վրա իր
պրօֆէսօրներին, որ երիտասար-
դը վատանգաւոր մարդ է, մատ-
նութիւններ կը լինեն կառավա-
րութեանը, և այլն....Ոչն ա-
պստամբ համոզված, խնամա-
կալութիւնից դուրս եկած ու-
սանողին քուրմը այլ ևս հան-
դիստ չի թողնի. մայր, հայր,
բնատնիք, անձնական կեանք,
ամեն բան առարկայ կը դառ-
նայ նրա բամբասող, ամեն բան
արատաւորող լեզուի: Այդ բոլորը
մենք ինքներս փորձով տեսանք:

Հասակ առած ուսանողնե-
րը այնպիսի խնամակալութեան
տակ են գտնվում, որ իրաւունք
ունեն կարդալ Հայերէն կամ
ռուսերէն լեզուով միայն այն
գիրքը, լրագիրը, կամ ամսագի-
րը, որ ներանց թոյլ է տալիս
իրանց քուրմը: Մի լրագիր, որի
ուղղութեան դէմ է քուրմը,—

թէև ինքն միշտ կարդում է,դրված
էլ չը լինելով,—նա խստիւ արգե-
լում է և ուսանողին կարդալ:

Ահա ինչ դրութեան մէջ է
գտնվում մայրաքաղաքների հայ
ուսանողութեան մեծ մասը: Ե-
րեսոյ ինչ զարմանալու բան կայ
որ ուսանողը վերադառնում է իր
հայրենիքը նոյն անզարգացած,
նոյն նեղհայեաց, նոյն անգործ,
նոյն թշնամի ամեն նորութեան.
ամեն առաջադիմութեան, նոյն
անտգնիս, նոյն միջնադարեան
գաղափարներով լի:

Ահա հասարակական ասպարէզ
է մտնում, պատկվում է, զաւակ-
ների հայր է լինում,—բայց իր
ամբողջ կեանքը մնում է հին
խնամակալութեան ներգործու-
թեանը ենթարկված: Կեանքի
դժուար հանգամանքներում նա
չունի իր սեփական աշխարհայե-
ցողութիւն, իր սեփական հա-
մոզմունք, և այս կամ այն վրձ-
ռողական քայլն անելու համար,
այդ հասակ առած, գրեթէ
ալևոր մանուկը, տարէնը մի
քանի անգամ Թիֆլիսից նա-
մակ է գրում Մոսկվա կամ Պե-
տերբուրգ, նայելով թէ որտեղ
է իր քուրմը, որպէս զի խոր-
հուրդ հարցնի նրանից թէ ինչ-
պէս վարվի կեանքի այս կամ
այն հանգամանքում, և ստացած
խորհուրդին համեմատ գործի....

Ահա ինչ է մեր ինտելիգեն-
ցիայի մեծ մասը: Նա բաղկա-
ցած չէ ինքնուրոյն, անկախ մը-
տածող, անհատապէս զարգա-
ցած անձերից, այլ մինչև իրանց
մահը մի որ և է մոլի և խա-
րար անճնաւորութեան խնամա-

կալութեան տակ մնացող կոյր,
ոչինչ ինքնուրոյնութիւն չունե-
ցող, ուրիշների, թուլիակի պէս
անգիր սերտած բառեր կրկնող
գործիքներից:

Դժբաղդութիւնն այն է, որ
ուսանողը վերադառնալով հայ-
րենիքը գտնում է և Թիֆլի-
սում և Ընդրկովկասի այլ մեծ
քաղաքներից մի քանիների մէջ
մի մի այդ տեսակ, բայց աւելի
մանր քուրմեր, որոնք մայրաքա-
ղաքների քուրմերի ագէնտներ են,
նոյն մոլի, խաւար անճնաւորու-
թիւններ, նոյն գեանապոր, գղուելի
անասունները, որոնց փտած գա-
ղափարներին լոյս աշխարհը վր-
նասում է:

Զարմանալին այն է որ այդ
մարդիկ իրանք, առհասարակ,
յիմար, ապէտ անճնաւորու-
թիւններ են, բայց գիտեն ազ-
դել երիտասարդութեան վրա
խորհրդաւոր, երկմտանի, անորոշ,
անհասկանալի բառերով: Ասրա-
նից մի բան, մի խորհուրդ ես
հարցնում,—նա հին յունական
փիթիա այի պէս մի առածով կը
պատասխանի քեզ, կամ կէս խօսք,
չը վերջացած պարբերութիւն
կարատասանի և խորհրդաւոր կեր-
պով կը լռի, հասկացնելով քեզ
որ հարկաւոր ժամանակ ինքն
կը խօսի այդ մասին, երբ բա-
ւական տեղեկութիւններ կը հա-
ւաքի, իսկ այժմ ժամանակ չէ....
Եւ այդպիսով մարդը միշտ են-
թարկված է մնում այդ խելօք
յիմարների հեղինակութեան դիւ-
թական ազդեցութեանը:

Այժմ մեզ գրում են Մոսկ-
վայից և Պետերբուրգից որ հայ

ուսանողութեան մեծ մասը սկը-
սել է վերջապէս ազատվել այդ
տեսակ քրմերի ազդեցութիւնից:
Շնորհաւորում ենք ուսանողու-
թեանը որ վերջապէս փոքր առ
փոքր դուրս կը գայ յիմարների
անբարոյականացնող խնամակա-
լութիւնից: Այսպիսով յոյս կա-
րող ենք ունենալ որ ուսանողների
հետևեալ սերունդը աւելի ինք-
նուրոյն կերպով զարգացած, ա-
ւելի բարոյական և ազնիւ կը
լինի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Հոկտեմբերի 1-ին

Շամախուց հաղորդած հայ-լուսաւորչականների և հայ-աւետարանականների միաբեան վերաբերմամբ նրանց բարոյական և կրօնական զարգացման և առաջադիմութեան աստիճանի մասին տեղեկութիւնները «Մշակի» 149 համարում առանձին-համակրութեամբ կարդացվեցան այստեղ: Ճշդութեան անաչառ հայեացքը, անկողմնապահ և ճշմարտասէր դիտողութիւնը ապացոյն արժանի է գովութեան: Ցանկալի էր, որ ամեն մի թղթակից ուշադրութեամբ և հաղիս գուրս գար ժողովրդի կարօտութիւնները և նրա, ցաւերը այսպէս ճշտութեամբ և կարեկցութեամբ նկարագրելու և հրապարակաւ յանդիմանելու նրա ներկայացուցիչների և հոգևոր գործիչների անգործունէութիւնը և վատ կողմերը, որպէս զի դէթ սրանով հնար լինէր զարթուցանել այս խաւարում քնածներին:

Շամախու հայ-լուսաւորչականները և հայ-աւետարանականները սիրով են վարվում միմեանց հետ և հաւատաս դիտաւորութիւն ունեն ամեն ազգային գործերում համերաշխ կերպով գործելու:

Շամախու ժողովուրդը քնած չէ, նա զգում է կարօտութիւն հոգևոր կերակուրի, մտաւոր կրթութեան և բարոյական զարգացման, բայց ասոցանից շատերը իրանց հոգևոր հովիւների մի քանիների շնորհիւ չը գտնելով իրանց մայրենի եկեղեցում այն, ինչ որ ցանկանում են, դժբաղդաբար

վրա յարձակուղը. պատահմամբ մօտն էլի գնաւմ ուներան, որին հանդիպելու էր Թուրայի հարուածը. նա մարմնի մի հապճեպ շարժուածքով փախաւ ոտից, և Թուրայի ծայրը առաւ իմ գլխարիկս կաշիէ պաշպանակին՝ որ ականջս վրա էր. պարոի պէս կորից կաշին ու մի եռանկիւն բաց արաւ պաշպանակի վրա: Վայ, եթէ գիտէիր գլուխս, մեռած էի. եթէ աչքիս, հիմա մէկը չէի ունենայ: Սոսկալի են այդ հարուածները. ուր որ դիպչին շատ անգամ մարմինն այնտեղ պոլար պոլար կապուտնում է, արիւնը մէջը խեղդուում է:»

—Բայց ինչու խաղերու այդ վտանգը,—հարցուցի, խօսքը կարելով:

Որովհետև վտանգն է միայն, կամ աւելի ճիշդ ասելով ցաւն է այդ տեսակ խաղերուն գլխ ոտքը. աւելի ոգով ես կպչում խաղին, ուր մի բան կորցնում կամ վատանում ես, մի ցաւ կամ հեշտութիւն զգում ես. կմրճ, ուր կիրքդ զարթնում ու գործում է: Փորով խազացողները այդ բանը լաւ են հասկանում: Մեր դիւղացին բան չի կորցնում. ցաւը կանցնի ու կը մոռացուի, իսկ մարմինը կը զեղուի այնպէս ու չարքաշ կը տեսորի: Զեղուածութիւն ու չարքաշու իւն այս յեղելուկ կեանքի մէջ ամեն քայլափոխի մեղ հարկաւոր կը լինեն:

«Զբօսանականերէն մէկն ասեմ, ուր անվնաս հեշտութիւնը դիւթում է խաղացողին. այն է ճոճելիկ*) խաղը: Տատերկքէն մինչև տատեանց տարեկան աղջիկներ իրենց ընկեր ու ընտանի տղոց հետ խազում են այս կէտորից յետոյ կամ երեկոյ այս ինչենց տանը: Այդ գնալ ու գալու մէջ մի տատելի հրապոյր կայ՝ որ հարբեցնում է պատանի աղջկայ սիրտը. բարձրանալու, ի նեղու և դարձեալ բարձրանալու ժամանակ՝ շարժմամբն ու փէշերով

*) Ճոճելիկ, ճոճանակ. կայ նաև ճոճք՝ ուր ծրծքան երեխայք են օրօրուում ճոճուելով:

հանած քամու մէջ գեղեցիկ ծամերը ծաւալ ծաւալ խաղում են, լիակուրծ ծծած օդովը ուռուցիկ լանջն եկեղ է անում իր ձեռակար կրծկալի տակ՝ որ պաշտպան դուռն է երկու մոդական աշխարհներու, այտերն այն արագ շարժման մէկ յատկութեամբը լցուած ու կարմրած են, աչքերուն մը տեսակ զմայլմունք է եկել՝ որով աղօտ է տեսնում իր շուրջն եղածները. երկու ձեռով ամուր բռնել է չուանները երկու կողմանէ. մէկ գլուխն է հասնում մեծ ու բարձր ատն ատիրին, մէկ՝ ոտները հանդիպակաց գերաններուն զարկում, ճոյլ ուրախանալով: Երդքի վրա երկնցուցած գերան հատ ձողը կամ թաւը, որի վրայից այս ուրիշ կողմէն կախվում իջնում է՝ մինչև ատ յատակին մօտիկ երկայն չուանը, ինքն էլ երբեմն շարժման թափին զգում է և ճռռոցներ հանում: Ետևը կանգնած մի եռարիւն պատանի կամ մի այլ աղջիկ հոլնում, հրում է, ճոճուղին՝ երբեմն երբեմն: Գող են պատանու աչքերը. վարպետ ու արիւն է նաև աղջիկը, և չի թողնում որ սիրելի աւազակի աչքերը ծր և է բան կարողանան աւարել իրանից: Երկուսի սրտի մէջն էլ մի բոց կայ, մի իշտ. բայց երկուսն էլ անմեղ են ու տուրբ: Բայց աղջամղջի հետ՝ երդքի վրա դարած՝ արդարև դողի պէս ներքև նայում են ուրիշ աւազակներ, որոնք չամարձակութիւն չունեն տուն մտնելու՝ սերձաւոր կամ ընտանի չը լինելով. երբեմն զուարճասէր չարութեամբ շարժում են թաւը կամ վեր են բարձրացնում և ապա վայր են թողնում իւր տեղը և պատում են ճոճելիկի վրայ նստող աղջկայ լերդին որ ձիչ է հանում չամեստարար, և երբեմն էլ աչքերը վերցնելով հզորը խեղդէ ձեղի» տալիս է մի անպատիճ շեշտով ուր վէրքի չետ գանգատ է և սպեղանին: Ծոքա այլ աւազակներ են, ներող եղիր ատելիանս, դոցա թուսկանի մէջ լու է ընկել. այդ խլրտուն արիւն ունեցողները ծանր են տրա կամ նորա աղջկայ վրա, ասել է՝ սիրահարուել են. և այլակատնդիր, այս և այն տանքի՝

ուր խազն է լինում՝ երգեցկալը վերցնելով որոնում են գողտուկ իրենց սիրուհին, թէ կը տեսնեն արդեօք. կամ, ինչպէս ասացի, տատանութիւն են անում:

«Այս խազերէն դուրս նոյն մի այլ զբաղմունքի յիշատակ գրուած է միտքս: Երբ ձրագները վառվում են, կամ մեր լեզուով ձրագկապոցն, ամեն մարդ գնում է իւր ուզած օտէն: Մէկի օտայում տեսնում էք ժողոված են լրկամիա և ծաներտարոյ մարդիկ. նոցա խօսակցութեան նիւթն է ըստ այնմ ժամանակի և իրենց շրջանի խնդիրներն են քննվում ու դատվում, լսած կարևոր լուրերն են իրար հաղորդում, և երբեմն իսկ ատաւածաբանական խնդիրներ են մէջ բերվում, նոյն ուտումնական. գիտուք դու գիտուն ես համարած ու մէջերը նոտած ես. տարիքն առած մի յարդելի մարդ հարցնում է քեզ. «Թուրքերն էլ յարքայութիւն կերթան.» կամ մի ուրիշը քէ «Ողորդ է որ արևը կայնուկ է ու երկիրս է պտրտուղը:» Խօսակցութեանը նիւկայ են և երբեմն իսկ մատնակից՝ հատակներն առած անցած կատայք, որոնց թէչիկը (րոքը) միշտ ձեռքերումն է և մանում են. մէջեռմը անտես կանգնած ու լըսում են նոյն երբեմն ատտերոջ հարսներն ու աղջկները. այնտեղ են նոյն ջահիլ տղէքը, տան ու դրացի ծառաները, եթէ հետաքրքրութիւն ունին և ուզում են մարդավարի խօսակցութեան ատենջ դնել: Գնացէք մի այլ օտա. այնտեղ կը տեսնիք ջահելջուհեներ, թեթև մարդիկ. սեղմ լցուած են, ատում ու լսում, հրուհրտում ու քրտքրտում են, խաղում են, իրար վրայէն ու չուխի փոշին են թափ տալիս, հնքնաթ են ատում, խաղ են կանչում, փող են փչում, տազ ածող ունին, օյին հանող ունին, դիմատաժուկ մարդիկ զանազան խաղարուեստներով ամենայն կերպ զուարճութիւն կը տարածեն օտատորը. ով չի ուզում ներս մտնել, կամ օտար լինելով հնարէն վախենում է որ ներս երթայ, նա օտի երդիքը ու-

շիկ բաց է արել ու ներս է նայում կամ ականջը դէմ է դրել որ լսէ թէ ինչ են խօսում, բայց ներսէն մի ազդարարութիւն սոխպում է նորան երդիքը կալնել և հեռանալ: Երիքը, որ ծանր օտաներու սեփականութիւնն է և երեկոյի մի բաժին իրեն է պրատում, այստեղ ևս մուտք ունի. միայն այնտը է թեթև լինի, հեքեաթանման. օրինակ Հրբաշիկ երիքը կամ Սրբոց վարքը, և որոնք սոցա պէս են: Ես, որ արդէն ինչ գիրք ձեռքս ընկնէր վարժ կարդում էի և կարդացողի համբաւ ունէի, օտաներում կարդում էի և ժողովքն ամենայն լռութեամբ և ուշադրութեամբ լինէ մտիկ էր անում, երբեմն էլ մի բացագանչութեամբ իր ճաշակը կամ խորհուրդը յայտնում. սրբերն հիացնում, սրթափարչարները խորշեցնում էին, խայտառակուած սատանաները ծիծաղեցնում: Ուրեմն մեր քննութեան նիւթերն էին Սուրբ և հրաշք, Չար և մոլեպարտութիւն, Սատանայ և կործանումն: Շատ անգամ մի Ալէքսիանոս մեզ լաց է բերել, մի Աբբայ Մարկոս զարմանք, և երբեմն մի յիմար սատանայ ծիծաղ. օրինակ ամենագիտունդ քահանան թիւ պատարագ է անում և սարկաւագն յանկարծ ծիծաղում. երբ յետոյ ատենդատնում չարչարում են պատճառը, սարկաւագն ասում է թէ «մի սատանայ սեղանի ետև նստած գրում էր ժամատրներու մեղքերը. երբ թուղթը լցուաւ ու էլ տեղ չը կար գրելու, սատանէն նորա մէկ ծայրը սատաններու՝ միւսը մատներու մէջ ատած՝ քաշում էր որ երկնցնայ, յանկարծ թուղթը պատռաւ և վարպետորդու գլուխը շրխկ դիպաւ պատին»: Ողորմելին իւր սատանայ տեղովը խազք ու խաղատակ է լինում: Մենք այդ կարդալով ծիծաղում էինք բոլոր քանչ, քանչ. բայց և հատատում էինք: Չարմանալի է թէ ինչպէս այն մեծ մարդիկը, որ մեր լեզուն վերածեցան և մեր պատմութիւնը՝ Նէնիկներով և Թորնեցիներով, որ մեզ Հայկազեան բառարանները տուին, Հայր Աբէղեի Քերականութիւնը

Fonds A.R.A.M

դիմում են օտար եկեղեցի, և այսպէս մեր Հայաստանեաց եկեղեցին օրըստօրէ դատարկվում է և մեր ուսումնարանները բնակիչ են:

Ցետադիմութիւնը ակա իսկ պատճառ, որ հայ-լուսաւորչականները մեծ բազմութեամբ յաճախում են աւետարանականաց եկեղեցին:

Ա. Հայք, ընդհանրապէս, ի Ռուսաստան, ի Հնդկաստան, ինչպէս նաև ի Ցամքաստան, թէ՛ բնութեան և թէ ազատութեան ներքև, իրենց ազգային լեզուի մասին սառուկ սիրով մը փայլած չեն, և չեմ սխալիր կարծեմ բսելով թէ Հայութեան անկման առաջին դարերէն ցայսօր՝ լեզուին ազգայնութեան ամենէն զօրաւոր և սրտագին կապերէն մին ըլլալը դրեթէ գլխովին մոռցուած է ելեր ի մեզ: Արդ, թողունք հեռաւոր տեղերը և ժամանակները, նոյն իսկ մեր մօտը Պօլսոյ մէջ, ուր գրեթէ բոլոր հայք առհասարակ հայերէն գիտեն (վատացիք և կեսարացիք խիստ փոքրիկ բացառութիւն մը կը կազմեն), և ուր ազգային զգացումն այսքան բուռն կերպիւ զարթած է վերջին տասնեակս, բացի կանանց՝ գրեթէ բոլոր հայք, երիտասարդք, ծերք, տղայք, գրոցէն նոր ելած պատանիք աւելի կը սիրեն ֆռանկերէն խօսիլ քան իրենց ազգային լեզուն: Պօլսէ՝ Պօլսոյ շուկաները, մեծ արձարանները, իջի՛ր գիներուները, մանր եկու արհեստաւորները, հայն ամեն տեղ գրեթէ հարիւրին 80 ֆռանկախօս է, և չըսուի մեզ թէ ժողովրդեան գերհիկ մասն է միայն որ այդ սովորութեան կը հետեւի. մեր ուսեալ և լուսաւորեալ կարծուած մասին մէջն ալ ազգային լեզուն իւր պատշաճ յարգը գտնելէ շատ հեռի է: Ցեսէք անգամ մը պատերուն և դռներուն վրա փակցուած այլ և այլ յայտարարութիւններն, ուր Պօլսոյ ամեն լեզուները կը տեսնուին, բացի Հայերէնէն, զի հայը ֆռանկախօս կը ներկայանայ անդ: Ու եթէ նոյն իսկ հայ յայտարարողք իրենց յայտարարութեանց մէջ հայերէն չեն դներ, զարմանալի՞ է որ պետութիւնն ալ իւր պաշտօնական ծանուցմանց մէջ հայերէնի ամենևին կարեւորութիւն չը տար...: Լուսաւորեալ հայեր ըսէնք, և ցաւօք միտքս եկաւ այստեղ Պօլսոյ հրատարակին վրայ իւր վիճակաւոր ծանուցագրովը նշանաւոր վաճառանոց մը արեգակնափայլ, որոյ ծանուցատախտակին այլ և այլ լեզուաց մէջ՝ ի զուր ճգնեցայ գտնել վաճառատիրոջ լեզուն, զի չեմք կարծեր թէ սա իւր ազգութիւնը ուզէ, կամ եթէ ուզէ՝ կարենայ ուրանալ: Անանկ գէշ քանիներ ի Լեռա, ի Պօլիս, ուր իրենց հոյակապ խանութներուն վրայ գոնէ Գազղիարէնին կամ ֆռանկերէնին քովիկը իրենց ազգային գրեան ալ փոքրիկ տեղ մը շնորհելու չեն հաճիր մեր ազգասէր պարոնայք: Ինչ հա-

կապտակեր բնաւոյց հետս... Աստուա՛ծ իմ: Բ. Բայց լեզուի մասին մեր ոգբալի կացութիւնը միայն այս չէ. եթէ ազգին մեծագոյն մասը սովորութիւն ունի բնդհանրապար ուրիշ լեզու գործածելու քան թէ հայերէն, մնացեալ փոքր մասն ալ, որ տանց մէջ (կանայք), դպրոցաց մէջ (տղայք) և շատ քիչ անգամ ազգիս անդին հայերէն խօսիլ կը կարծէ, ինչ տեսակ հայերէն է որ կը խօսի այն հայերէնը, որ մեր մամիկներն ալ կը խօսէին ասկից 100—200 տարի յառաջ, որ ոչ հայերէն է և ոչ ռաճկերէն, այլ խառնուածին բան մը, հրեշ մըն իրաւ է, որին 30—40 տարուան մէջ մեր գրբանան աշխարհաբարը մաքրուելցաւ օտար բառերէ, բայց խօսակցական աշխարհաբարնիս դրեթէ քայլ մ'անգամ առած չէ, և ամենքնիս ալ, առհասարակ, նոյն իսկ ուսումնականք և վարժապետք, սովորութիւն ունին ամենօրեայ խօսակցութեանց մէջ՝ ի կիր արկանելու զայն աղճատ լեզու՝ ի ծաղր օտար ունկընդրաց, որոց կէս առ կէս հասկանալի կըլլայ խօսածնին, և որք խիստ խեղճ դաղափար մը կը կազմեն զայն խօսողաց վրայօք, զի «լեզուն ազգի մը հայելին է»: Բայց զարմանալի չէ՞ արդեօք տեսնել նոյն իսկ բարձր կարդերու հայ դպրոցականք, որք ճարտասանութիւն և տրամաբանութիւն կը կարդան, ուղիղ հայերէն խօսելու վարժութիւն ըլլած չըլլալով, նոյն անհեթեթ լեզուն կը գործածեն թէ՛ ի դպրոցի և թէ այլուր: Այսպէս «վերթիվէնէն վար ինչնալ, թէքմէ զարնել, շիշման տալ, գայիք մարդ, օրթա խաթ, թավանէն կախուած, պաճախը, ուռենալ, պօղազը ցաւիլ, ետխուշը ելնել, և այլն, և այլն, ասացուածներ, զորս ամենքնիս առանց հոգ ընելու կը գործածեմք: Ս այս մասին՝ շիտակը՝ հետաքրքիր եղայ իմանալու թէ կա՞յ դպրոց մը ոյր կանոնագրին մէջ հայերէն մաքուր խօսիլն իբր սահպղական պատուիրեալ ըլլար. գժբազդաբար մինչև ցարդ ոչ ուրեք այսպիսի բան մը չեմք կրցած տեսնել:

Մեր կուզեմք սառարց առջև յարդ և համարում ունենալ, սիրելու և յարգելու համար մեր լեզուն, և ջանալու համբ բարձրացնել զայն: Մանաւանդ ուսումնական խորհուրդն և դպրոցական տեսչութիւնք հակելու են որ իրենց յանձնուած մանկտին ամէն ոք ու է ուսմունք է յառաջ, որքան կարելի է մաքուր հայերէն խօսել վարժուի, և սէր ունենայ անոր վրայ, որպէս զի դպրոցէ ելնելէ վերջն ալ, շուկայի մէջ ու այլուր, առթի չը համարի իրեն նոյն լեզուաւ խօսիլ իւր հայ ընկերակցաց հետ, ապա թէ ոչ, ա՛չ միայն դրաքաւն, այլ նոյն իսկ աշխարհաբառնիս ալ մեռած լեզու մը պիտի դառնայ, քանի որ կենդանի բարբառով խօսուելը հետզհետէ դադարի:

(Մնացեալն)

ՆԱՄԱԿ ԵՐԻՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 25-ին

Մեր քաղաքացի բժիշկ պ. Լեւոն Տիգրանեանցը անցեալ օրը ստացավ գէպի Թիֆլիս Հասատատ ազգասիրներից տեղեկանալով նրա, որ նրա Ամենապատուարժան Գերապետն է թոյլատրութիւն խնդրել Գրաքննական կոմիտեից հրատարակելու Երևանում մի բժշկական ամսաթերթ եկող 1881 թուականի յունվար ամսից: Մենք, երևանցիներս չենք կարող ուրախութեամբ չը լսել այդ բարի լուրը և չը շնորհաւորել պ. Տիգրանեանցին նրա բարենպատակ ձեռնարկութեան համար:

Գարան բժշկի ձեռնարկութեան վերաբերութեամբ մենք հրահանգներ տալու միտք չունենք, որովհետև նա արդէն որոշած կը լինի, թէ ինչ ուղղութեամբ, ինչ նպատակով է հրատարակելու իր ամսաթերթը, բայց թող աւելորդ չը լինի յայտնել այստեղ մեր համոզմունքը այդ ներքաղրելի հրատարակութեան մասին:

Հասկանալի է, որ եթէ պ. Տիգրանեանցը իր գործն սկսելու լինէր Եւրոպայի քաղաքներից մէկում, նա գուցէ լրնէր իր ամսաթերթը բժշկականութեան վերաբերեալ նոր գիւտերով, կամ նրա մէջ տեղ տար այնպիսի յօդուածներ, որոնք փիղիքական կամ քիմիական այս ինչ ու այն օրէնքներով հատատելիս լինէին բազմատեսակ հիւանդութիւնների ծագումը, անոթութիւնը, նրանցից առաջացող վտանգի չափը, և այլն և այլն: Ուրիշն այն ժամանակ կարելի էր ասել, որ այդպիսի հրատարակութիւնը ծառայելու է ուղղակի գիտութեան օգտին և նրա հրատարակիչը նպատակ ունի բանել բժշկականութեան ասպարիզում մի նշանաւոր տեղ իր տարածած գաղափարներով ու գիտութով: Բայց Երևանի պէս մի գաւառական քաղաքում բժշկական լրագիր հրատարակողը, ուրիշն և պ. Տիգրանեանցը՝ հեռու այդ բոլորից պէտք է, մեր կարծիքով, մի այսպիսի նպատակ ունենայ: Նա քաղաքներում առողջապահական հարցերի վրա խօսելիս, անմաքրութիւններից առաջացող վտանգը հասկացնելիս, պէտք է պերճախօս, վառ գաղափար լինի. նա մեր գիւղերի մահացուցիչ ապականութիւնները, տներն կեանք մաշող գրութիւնը, դասաւորութիւնը նկարագրելիս՝ պէտք է խիստ պահանջող, հարուածող լինի. նա գիւղացու անուսունների, թաչունների սպառնող աւերախիտ հիւանդութիւնները գրելիս, պէտք է կատարեալ քահանայի պաշտօն կատարէ, հասկացնելու համար այդ գիւղացուն, որ այդ բոլոր անբաղդութիւնները ոչ Աստուծու պատիժ են, այլ բնութեան պատահական երևոյթներ. մի խօսքով նա ամեն դէպքում, ամեն գայլափոխում պէտք է ներգործել կարողանայ իր գրչով հասարակ ժողովրդի վրա, որին ամենեին ծանօթ չեն մաքրասիրութեան կանոններն ու օգուտները:

Գաւառում հրատարակվող բժշկական լրագիրը գլխաւորապէս պէտք է հետաքրքրվի տեղական հիւանդութիւնների հետազօտութիւններով և նրանց առաջն առնելու միջոցներով: Արանց մեծ գործ կատարած կը լինի և հասած կը համարվի իր նպատակին, որովհետև մահացելի կը լինի ամեն դասակարգի մարդկանց:

Մենք չենք մոռանում յիշել այստեղ և այն բժշկական միջոցների մասին, որոնցից մինչև այժմ օգուտ են քաղում մեր տնային բժիշկները հիւանդին առողջացնելու համար, և զարմանալի բան է, երբեմն այդ տանու բժիշկներից գտնվում են այնպիսիները, որոնք պատահմամբ դուրս ընկած մէկի ձեռքը կամ ոտքը և կամ պատեբազմի դաշտում անդամալոյծ վիրաւորուածին առողջացնում են կարճ միջոցով. այն ինչ մենք տեսել ենք շատ գիտնական բժիշկներ, որոնք միակ ելք են համարել այդ դէպքերում հիւանդի կամ կոտրած ոտքը, ձեռքը կտրել: Թող չը

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՄՇԱԿ
1880 — № 220

ՆԱՄԱԿ ՆԱՀԱՊԵՏԻՆ

Ծովակալ-Նահապետ Միքայել Լազարեւի

Ներկայ Նամակիս մէջ ուզեմ ի մտի ունենալ ոչ թէ ձեր անձը, այլ ձեր պաշտօնը, որ ներկայիս ձեր վրայ է դրուած։ Ես ձեզ ճանչցայ 1877 թուականին, երբ ես Ռուսիոյ մէջ էի, իսկ դուք Ռուսիոյ ծովակալն էիք։ Ես ձեզ ճանչցայ ոչ միայն ձեր ծովակալական պատուոյ շքանշանով, այլ նաեւ ձեր ազգասիրական գործունէութեամբ։ Ես ձեզ ճանչցայ իբրեւ ազգասէր մարդ, որ ձեր ազգին ծառայելու համար ձեր ամբողջ կեանքը զոհեցիք

ռիկանը դարձեալ պահանջում է որ քահանան իջնէ բեմից և լսէ նորին գերազանցուցած իջնէ բեմից և լսէ նորին գերազանցուցած թեան հրամանը։ Այդ թէև չէ աջողվում ռիկանին, բայց ժողովուրդը վրդովվում է։ Թէև հաստատ խնդացանք որ պ. նահանգապետը առաստաղ իսկ յանդիմանել է ռոմիկանին, նրա արարքի համար, բայց արդէն ուշ էր, արմհևան անհամոքները արդէն եղած էր։

ԸՆՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„Times“ ԼՐԱԳԻՐԸ ԱՆԳԼԻԱՑԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

„Times“ լրագիրը, խօսելով միացեալ նահանգների լուծվելու մասին, յայտնում է, որ Անգլիան առաջվայ պէս պատրաստ է օգնել արեւելեան հարցի վերջնականապէս վճռվելուն, բայց „Արեւելքի մէջ առանձին շահեր չունենալով“, այդ վճռի ակզբնապատճառ չի դառնայ։

Այս խազազական յայտնութեան մէջ բաւական խորամանկութիւն կայ։ Այդ յայտնութիւնը չէ խանգարում անգլիական մինիստրութեան ազատ գործողութիւններին, որի հետ „Times“ լրագրի յարաբերութիւնները բաւականական են, ուրեմն ամենքը համոզված են, որ „Times“ լրագրի յայտնած կարծիքները անգլիական պաշտօնական շրջանների կարծիքներ են։

Այն ժամանակից, երբ Գլադստօն տեղեկացաւ, որ միացեալ Եւրոպայի գործողութիւնները անաջող հետեւանքներ պէտք է ունենային, նա համոզվեցաւ, որ Արեւելեան խնդիրը շուտով լուծելու համար պէտք է թոյլ տալ Թիւրքիային, որ նա ամէն տեսակ ազգներ անէ, որոնք անպատճառ կորուստի կը հասցնեն օսմանեան պետութեանը։ Այս համոզմունքը ազդեց, որ Գլադստօն արտասանեց Լօնգթոնի ծառայի ընտրողներին յայտնի ճառը։

Արեւելեան հարցի վերջնականապէս վճռվելը այնպէս պէտք է հասկանալ, որ այդ վճիռը բոլոր պետութիւնների համար ցանկալի բնաւորութիւն ունենայ։ Յայտնի է, որ պետութիւնները ցանկանում են պահպանել սուլթանի իշխանութիւնը Բալկանեան թերակղզու վրա, բայց այնպէս որ նա չը սպառնայ եւրոպական խաղաղութեանը։ Եթէ „Times“ լրագիրը ճշդութեամբ արտայայտում է Գլադստօնի մինիստրութեան հայացքները, ուրեմն պէտք չէ ենթադրել, որ անգլիական կառավարութիւնը հրաժարվում է արեւելեան գործի մէջ խառնվելուց, այլ ընդհակառակը նա աւելորդ է համարում Թիւրքիայի ուրացութիւնները Արեւելքի մէջ։ Անգլիական կառավարութիւնը պատրաստ է օգնել միւս պետութիւններին սուլթանի իշխանութիւնը պահպանելու համար, բայց նա մտադիր չէ առանց միւս պետութիւնների օգնութեան ազատել սուլթանի իշխանութիւնը։ Անգլիայի շահերը չեն վտանգվի, եթէ ամբողջ Բալկանեան թերակղզին կանցնի նրա բնակիչ քրիստոնեայ ազգութիւնների ձեռքը։

Այս պրօգրամը ինչպէս ունենալու չէ, այնուամենայնիւ կարող է պատահել, որ Անգլիան կը խառնվի յարեւելեան պատերազմի մէջ։ Անգլիայի շահերը պահանջում են, որ Բոսֆորոսը չը ձերնվի իր զօրեղ հարեւանից և եթէ եւրոպական համաձայնութեան խանգարվելը յարեւելեան պատերազմի պատճառ կը դառնայ, անգլիական կառավարութիւնը սպիպված կը լինի միջոցներ գործադրել, որ յունական ափերը վտանգի չենթարկվին։

Այս բոլորից երեւում է, որ անգլիական կառավարութիւնը նախապատճառ է թոյլ տալ, որ անցքերը բալկանեան թերակղզում վրա ազատ ընթացք ունենան և մի և նոյն ժամանակ պատրաստ լինել միացեալ կամ միւս պետութիւնների հետ, խառնվել գործի մէջ, երբ այդ բանը կը պահանջին անգլիայի շահերը։ Ինչպէս „Times“ լրագրի այդ յօդուածը, նոյնպէս Գլադստօնի ճառը ակնարկում են եւրոպական համաձայնութիւնը խանգարող պետութիւնները, որ նրանց ընթացքը չի ազատ թիւրքիային, այլ ընդհակառակը կը շատացնի նրա անկումը, որ շատ ցանկալի է անգլիական այժմեան կառավարութեան համար։

ՖՐԱՆՍԻԱ

—

„Temps“ լրագիրը քննում է ֆինանսական հարցը Ֆրանսիայում։ Մատնացոյց լինելով 1875—77 ֆինանսականների ֆինանսների վատ դրութեան վրա, երբ հետզհետէ ուսկայացող ծախսերը բիւջէից աւելի էին լինում և աւելորդ ծախսեր էին պահանջում, և ֆրանսիական ֆինանսների այժմեան գեղեցիկ դրութեան վրա, լրագիրը հարց է առաջարկում, թէ ի՞նչ աեղ է ծածկված այդ իրողութեան գաղտնիքը։ Լրագրի կարծիքով ֆրանսիայի ֆինանսների այժմեան լաւ դրութեան պատճառը երկրի ներքին ապահովութիւնն է։ «Աշխատանքը, խնայողութիւնը և ժողովրդի բարօրութիւնը, ասում է լրագիրը, մեր ֆինանսների դրութիւնը լաւացրին։ Բանի որ ժողովուրդը համոզվում էր, թէ ինքն է իր վիճակի տէր և կարգադրողը, նրա հանգստութիւնը և բարօրութիւնը լաւանում էր։ Անհրաժեշտ էր հասկացնել աշխատող ամբոխին, որ նրա ապագան ապահովված է։ Այս անգամ արդարացաւ յայտնի առածը, թէ «Հեռևեցէք լաւ քաղաքականութեան և նա ձեզ լաւ ֆինանսներ կը տայ», բայց կարող է արդեօք նրանից լաւ քաղաքականութիւն լինել, որ իր նպատակ է դարձնում յարգանքով վերաբերվել երկրի կամքին և իրաւունքներին։»

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Ֆրանսիական ազգային ժողովների մէջ եղած վիճաբանութիւնները Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան մասին չափազանց հետաքրքիր են։ Թէ սենատի և թէ պատգամաւորների ժողովի մէջ աչքի էին ընկնում հանրապետութեան թշնամիները։ Սենատի մէջ կառավարութեան վրա յարձակվում էր օրլեանական Գօնսօ-Բրօն, ֆրանսիական նախկին դեսպան Բելլինի մէջ, իսկ պատգամաւորների ժողովի մէջ բոնապարտեան Դևլաֆօս։ Երկուսն էլ շատ լաւ գիտէին, որ Բաթանբէմի Անտա-Լէկը, որի վրա նրանք յարձակվում էին Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան սխալների պատճառով, բոլորովին մեղաւոր չէր, միայն նրա վրա յարձակվելով, հանրապետութեան թշնամիները ի նկատի ունէին գամբետային։

Փոխանակ հարցը ուղղակի գնելու և մեղաւորին բացարձակ պախարակելու, մատնացոյց լինելով այն վտանգի վրա, որ կարող է առաջանալ անձնական, գաղտնի և անպատասխանատու կառավարութիւններից, հերետիկները յարձակվում էին անմեղ մինիստրների վրա ծուլային ցոյցին մասնակցելու պատճառով, որ Ֆրանսիայի համար անհրաժեշտ էր, եթէ նա չէր կամենում կորցնել իր դրութիւնը մեծ պետութիւնների շարքում։

Որովհետև հարցը այսպիսի սխալ հիմունք ունէր, արտաքին գործերի մինիստրը հեշտութեամբ կարողացաւ յաղթել իր հակառակորդներին։ Ամենքին յայտնի է, որ այն ժամանակից, երբ Բարտելեմի Սենտ-Իլեր սկսեց կառավարել արտաքին գործերի մինիստրութիւնը, Ֆրանսիայի քաղաքական դիրքերը աւելի էլ խոցոտելի դարձաւ։ Նա ամենից շատ նպատակ միացնել Նաւարտինի լուծվելուն և Ալբիական ծովից հեռանալուն։ Ցավալին հետաքրքիր էր այն իրողութիւնը, որ գուցա Բրօլլի պաշտպանում էր թիերի քաղաքականութիւնը։ Վասն որ գործը այսպիսի ընթացք առաւ, վիճաբանութիւնները ոչինչ հետևանքներ չունեցան։

Այժմ վիճաբանութիւնները նոյնքան քիչ մնկնցին Ֆրանսիայի ապագայ արեւելեան քաղաքականութիւնը, որքան և „Դևլին դիրքը“։ Ինչպէս կը փիլսաթվի Ֆրանսիան յոյն-թիւրքական հարցին, ի՞նչ ուղղութիւն կունենայ գամբետտայի քաղաքականութիւնը, այս բոլոր հարցերը առանց պատասխանի են մնում։

Յայտնի չէ, թէ ո՞ւմ պէտք է հաւատալ. «Republique Française» և „Journal des Débats“ գամբետտայի լրագիրներին, որոնք խորհուրդ են տալիս Ֆրանսիային թողնել իր հասկաց դիրքը, թէ արտաքին գործերի մինիստրին, որ հետևողութեամբ պաշտպանում է թիերի քաղաքականութիւնը և առաջարկում է նորից այդ քաղաքականութիւնը հետևել։

Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան ընթացքի անյայտութեան պատճառը այնքան բարդեալի Անտա-Լէկը չէ, որքան այն յօդուածները, որոնք տպվում են գամբետտայի լրագիրների մէջ և հետաքրքրութեան համար հանելուկ են դարձել։ Օրինակի համար „Republique Française“ հետևեալ նկատողութիւնն է անում Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան մասին։ „ժողովուրդը խաղաղութիւն է ցանկանում և խաղաղութիւնը կը պահվի։ Բայց ժողովուրդը ամբողջ խաղաղութիւն չէ ցանկանում, որ հակատակ է նրա շահերին, վնասում է նրա անուանը, և որ պահպանելը երկրին խորհուրդ են տալիս այնպիսի մարդիկ, որոնք ծանօթ չեն Ֆրանսիայի պատմութեան, նրա շահերին, նրա կոչման և վիճակի հետ։“ Վերջին խօսքերը յիշեցնում են Նապօլէօն III-ի հրաւէրները, որոնց օգնութեամբ նա կարողացաւ Ֆրանսիային պատերազմի մէջ խառնել։

Բացի գամբետտայի լրագիրներից, Ժիւլ Ֆաւրները թէ հանրապետական և թէ պահպանողական ուղղութեան բողոքում են և չեն ցանկանում արտաքին այնպիսի մի քաղաքականութիւն, որ առիթ տայ եւրոպական պատերազմի։ Ամենից շատ այդ լրագրիները յարձակվում են գամբետտայի դիտաւորութիւնների վրա, մանաւանդ որ նա զգացնի հրահանգներ է տալիս, փոփոխում է մինիստրներին և ինքը անպատասխանատու է մնում։

„Justice“ լրագիրը այսպէս է պատասխանում գամբետտայի օրգանին. „Մենք հաւատացած ենք, որ երբեմն խաղաղութիւնը ամօթալի է լինում, բայց զգուշութեամբ ձեռք բերված խաղաղութիւնը մեծ այժ կը տայ Ֆրանսիական ժողովուրդին, եթէ մեկը պատերազմ չէ ցանկանում, այլ աւելի գործնական արտաքին քաղաքականութիւն, թող նա յայտնէ մեզ իր պատճառները, որոնց մենք կը քննադատենք։ Մի բան հասկանալի է ասել, որ անկարելի է այդպիսի քաղաքականութեան հետևել, քանի որ երկիրը կառավարում է այնպիսի մինիստրներից, որոնք խազալիկ են դարձել մի անյայտ իշխանութեան ձեռքին։ Միայն յաւ կազմակերպված և պատասխանատու մինիստրութիւնը կարող է հետևել գործնական արտաքին քաղաքականութեան։“

Բանապատրաստականները, որոնք կորցրին իրանց առաջնորդին, խակ միւսին չընտրելին, նորերում առիթ տուին հասարակութեանը իրանց մասին խօսելու։ Այդ կուսակցութեան առաջաւոր անդամները յայտնեցին, որ նրանք կազմում են պարլամենտական մի նոր կուսակցութիւն „Union democratique“ (ժողովրդական միութիւն) անունով։ Այդ կուսակցութեան հեղինակները չը յայտնեցին նրա պրօգրամը, այլ միայն բաւականացան ասելով, „թէ կուսակցութեան անունից կարելի է եղրակացնել նրա գործունէութեան պրօգրամը։“ Յայտնի չէ, թէ այն մարդիկը գործելու կայսերութիւն են կամենում հաստատել Ֆրանսիայի մէջ և բոնապարտեան իշխաններից ո՞րն է նրանց առաջնորդը։ Այդ կուսակցութեան անդամներից մէկը նորերումս հրատարակեց կառավարչական մի պրօգրամ, որը իբր թէ կազմված է եղել Նապօլէօն III-ի օրոց, որ սպանվեցաւ զուլուսներից։ Այդ պրօգրամի մի քանի տեղերը լրագիրները խելացի են գտնում, բայց կասկածում են, որ նոյն իշխան Նապօլէօնից լինի կազմված։

«ՄՐԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

ԲԵՐԼԻՆ, 8 դեկտեմբերի։ Պաշտօնապէս հաղորդում են, որ գերմանական մանսաժողովը ընդունեց պաշտօնապէս հաղորդած առաջարկութիւնը յոյն-թիւրքական հարցը միջնորդ դատարանի օգնութեամբ վճռելու մասին։ Եթէ միւս պետութիւնները կը համաձայնվին այդ առաջարկութեան հետ, կերմանիան պայման է դնում, որ ամենից առաջ Ըսէնատանը և Թիւրքիան համաձայնեն հնազանդվել պետութիւնների միջնորդ դատարանի վճռին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբերի։ Այսօր հասաւ Պետերբուրգ դեսպան Սաբուրօվ։

ՄՈՍԿՎԱ, 8 դեկտեմբերի։ Համալսարանական խորհուրդը վճռեց. ի նկատի ունենալով ուսանողների դրդված դրութիւնը և ասների մտածելը, դադարեցնել դասախօսութիւնները համալսարանի բոլոր բաժինների մէջ։ „Моск. Вѣд.“ լրագիրը հաղորդում է, որ համալսարանի բէկասրը հետևողութեան պատճառով չը մասնակցեց խորհուրդին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 դեկտեմբերի։ Մինիստր Աբազա յանձնեց ուսաց կառավարութեան արտասահմանեան բանկիրներին պաշտօնապէս հերքել տարածված լուրերը՝ կուպօնների հարկը պետական արժէթղթերի վրա գործադրելու մասին։ Պիմիդոնների կուպօնների հարկի նախագիծը չէ վերարերում պետական արժէթղթերին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 դեկտեմբերի։ „Herold.“ հաղորդում է. Որերումս կայացաւ մինիստրների խորհուրդի արտակարգ նիստ, որին մասնակցում էին Գիրս և Միլիւտին։ Որովհետև ընդհանուր և յատկան հարցերը փոփոխութեան ենթարկվեցան «Herold.»-ում, որ Ռուսաստանի խաղաղ քաղաքականութիւնը այդ նիստի ժամանակ նորից ապացուցվեցաւ։

Fonds A.R.A.M

ն. ՊՕԼԻՍ, 7 դեկտեմբերի։ Ք. Դուռը պիտի օտար պետութիւնների դեսպաններին մի շրջաբերական, որի մէջ յայտնում է իր համաձայնութիւնը դեսպանների այն շրջաբերականի մասին, որով պահանջում էին անյապաղ անցկացնել թիւրքօ-էէյնօզօրեան սահմանները Բօհանի բերանից մինչև Սկուտարիի լիճը։ Թիւրքաց զօրքերի գլխաւոր հրամանատար յաւնաց սահմանի վրա նշանակված է Կերիմէ-փաշա։

ԼՕՆԴՕՆ, Աստղ հասան գօշն և Աստրուս-փաշան երէկ Սուլթինգարում, իրանդիայում, կալւածական վիճնդ կայացաւ. ներկայ էին 10,000 մարդիկ։ Պարզաւ. ներկայ էին 10,000 մարդիկ։ Պարլամենտի անգամ Սելիման իր ճառի մէջ յայտնեց, որ ներկայ կռիւը կալւածատէրների և ֆէրմերների մէջ կռիւ չէ. մեկ կամ միւս կողմը պէտք հուսան կռիւ է. մեկ կամ միւս կողմը պէտք է կորչի։ Շարաթ օր 2000 հոգուց բաղկացած ամբոխը աշխատում էր քանդել մագիստրատի անգամ Դաունինգի տունը. պօլիցիան սուրներով ցրվից ամբոխը։

խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բրիլն վաճառվում է մեծապիր

ՕՐԱՑՈՑՑ
1881-թ. Ռ.

սկզբում գեղաքանդակ պատկերք
Ս. ԱՐԻՍՏԱԿԻՍԻ
բոլոր օրէ. հրշ՝. մկ՝. հմ՝. գրուած են կարգաց հանդերձ՝

ԾՆՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ

յատկուածով ա. ա.
սկզբում է գեղաքանդակ պատկերք
ՍՈՎԵԱԼ ՀԱՑ ԸՆՏԱՆԻՔ
գինն է մինչև 600 վ. 35 կոպեկ, իսկ նորանից բարձր 40 կ.

Փոքրատիպ

ՕՐԱՑՈՑՑ
1881-թ. Ռ.

հանդերձ երկու գեղաքանդակ պատկերաց
ՀԱՑԿԱԶՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՑ
և Ս. Գ. Ր. Հ. եկեղեցին Ս. ԵԿԱՏԵՐԻՆԱՑ.
գինն է 10 կոպ.
Տփխուսմը ծախվում է պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում։

Ալիզավետինակի փողոցի վրա № 111 տան մէջ տրվում է վարձով մի բնակարան 5 սենեակից բաղկացած և նոյն տան մէջ խանութ։ 1—3

ՀԻՆԳՇԱԲԹԻ օր, 27-ին նոյեմբերի կը սկսվի ՋԱՆՋՈՒՂԱԶՈՎՆԵՐԻ մանպոլինուա տղամարդկանց կօշիկների և գդակների վաճառուճն, պիջումով, առանց ածուրդի։ Առնողները կարող են ընտրել և փոխել առած կօշիկները։ Նոյն տեղ վաճառուճն գինը և արտի նշանակված գներով։ 5—5

ՇԱՏ ՊԱՏՇԻՒԿՆԵՐ ԹՂԹԱ 1 ր. 20 կ. մինչև 2 ր. առնելաբ։ Ծախվում է ԸՆԳԼԻԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄԷՋ։ Մի և նոյն տեղը առացվել են դեղին ՄԱՀՈՒՃԱՊԱՐԵՐ և ուրիշ ապրանքներ մեծ քանակութեամբ։ 3—10

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ ԵԻԵԼԻՔՍԱՆԴՐՈՒՊՈԼԻՆԱՑ ՀԱՐՑ. այդ հանգամանքի ճշմարտութեան մէջ կարելի է համոզվել Ընկերական խանութում։ Ճրագներ գալերէյում, որտեղ առացված են մեծ քանակութեամբ թէյ առաջին կարգի, շօկօլադ, կակաո—Փրայ և ուրիշ ապրանքներ։ Խմիչքներ գինի և մրգի ազ ջերմի դէմ։ Պօնֆեկտներ հագի դէմ։ Դանակներ և պատառաքաղներ, նոր ձևի հրացաններ և այլն։ 5—10

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒՄ Է 1 և 2 կարգի թիֆլիսի ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ ԹԻՖԼԻՍԻ քաղաքային դումայի ԴՈՒՌԼԻՒՆԻ մէջ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ին առաւօտեան ժամի 11-ին լինելու են առևտրական վարչութեան հետևեալ պաշտօնական առարկաների ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ի նախագահ, փոխ-նախագահ և վարչութեան երկու ԸՆԿԵՐՆԵՐ։ 2—3

Ս ա ց ա ծ է Ա ր ա բ ա կ ի р. Ն ա խ ի ջ ե վ ա ն ի Ա ս տ ա ղ ջ ո վ ի կ ա ր ա վ ա ն ա տ ո ւ ն ը։ 3—5

Ի ր ա տ ա ր ա կ ո ւ թ ե ա մ բ Օ. Գ ր ի գ ո ր ե ա ն ց ի մամուլի տակից դուրս եկաւ պ. Ն. Ա ղ ա ն ե ա ն ց ի աշխատասիրած հայոց դպրոցների համար ընդհանուր աշխարհագրութեան դասագրքերը, որոնք արդէն ընդունվել են ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և գաւառների հայոց երկսեռ ուսումնարաններում և Ս. Էջմիածնի ձեռնարանում։

Դասագրքերը վաճառվում են բացառապէս Աղիսեան գրավաճառանոցում Օ. Գրիգորեանցի։

Ա. տարի՝ Սախագիտելիք (հայրենագիտութիւն Թիֆլիսի) 35 կ.

Բ. տարի՝ մասն ուսումնական և բնական (31 պատկերներով) 60 կ.


Գ. տարի՝ մասն քաղաքական (Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Ասորա լիա) 60 կ.

Գումարով առնողին փոստով կը լինի 12—20

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ
Ն. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Ե Ա Ն Ց
ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ
(Ոլոմինսկի Պրոսպեկտի մէջ, Աքսոնովների տան մօտ)

Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատանց յայտնած գներով։ Ծանր տեղերից թղթ բարեհաճեն դիմել հեռևեալ հասցէով.
Въ Тифлисѣ, въ газетное агентство В. Шавердова.
30—14

Ա. ՊԱՆՅԵՐ
ՏՏԵՄԸՆԱԿԱՑԸ ՓՈՂՈՑ





տուն Օ. Գրիգորեանցի նկող ձմեռվայ սեզօնի համար առաջարկվում են պատուէր հետևեալ մեքենաները ՄԱՆՕ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՐՄԱՐ ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ՊԱՐՈՆԵՐԵՆԵՐԻՑ առնուած ՀԱՐԻՒՐ չափազանց էժան գներով, այբիւնէ Հագի մի քանի ձևեր 12—15 րուբլ, Վոքի 50—80 րուբլ։
39—52

Об изданіи въ 1881 году

ГОДЪ „ДОНСКОЙ ПЧЕЛЫ“ ШЕСТОЙ

ГАЗЕТЫ ПОЛИТИЧЕСКО-ЛИТЕРАТУРНОЙ.

Съ 1-го января 1881 года «Донская Пчела» будетъ издаваться по той-же программѣ, какъ издавалась въ предъидущіе пять лѣтъ, два раза въ недѣлю.

Газета эта въ настоящее время получила такую популярность, особенно въ При-азовскомъ краѣ, что не нуждается ни въ какой рекламѣ.

Подписная цѣна остается прежняя:

Съ доставкою въ Ростовѣ н.-Д.		*Съ пересылкою иногороднымъ.*	
На годъ	6 руб.	На годъ	7 руб.
» 1/2 года	3 » 50 к.	» 1/2 года	4 »
» 3 мѣсяца	2 »	» 3 мѣсяца	2 » 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакціи «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой ул., въ домѣ П. А. Теръ-Абраміанъ. Иногородные благоволятъ адресоваться: въ редакцію «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногородныхъ подписчиковъ прислать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20 декабря настоящаго года подписныя деньги за 1881 годъ, будетъ разосланъ безплатно, въ видѣ преміи «Донско-Азовскій» русско-армянскій календарь на 1881 годъ.
3—10

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Զ Ի Ն Ո Ւ Մ

Համեմատեցէք թէյի գները			1 ր. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ			Ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	Ֆ. 3 ր.

10—100

ՆԱՄԱԿԻ ԹՒԻՆ
ԵՐԱՇԽԻՔ ՄԱՀՈՒՃԱՊԱՐԵՐ ֆագանց փափուկ և ձգուն նահապետրով։ Օրինակները կարելի է տեսնել Կաղանթարեան փողոցի վրա, տուն Զքուտխոսկու, Կօնտանտինօվսկի քնակարանի մէջ, Մօսկվայի „Ընկօլայ Ընդ.“ գործարանի հատարտար Ի. Պետր. Պետրօվի մօտ։ Մի և նոյն տեղը ընդունվում են Թրջե հագէջ մեքենաների և ուրիշ ապարանքների պատուէրներ 50-ից ոչ պակաս մահճակալներ պատուիրող վաճառականներին Մեծ զիջողութիւն կլինի։
2—9

Ծախում եմ Տների Շինվածքներ հանար ՕՂՋ ԱՅՍՐՆԵՐ, բնչ չափի էլ կամենայ գնողը, Աշխատելիք այդ այգու միս կողմը, ՄԱՀՄԱՆՆԵՐ ՈՏ, Ի սկսած ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ՄՏԺԵՆԻ իւրաքանչիւր քառակուսի ՍԱԺԷՆԻՆ ՀԻՆԳՏԻՑ մինչև վեց ՐՈՒԲԼԻ Հատար քառակուսի սաժէնից աւելի գնողներին իւրաքանչիւր քառակուսի սաժէնին 50 կ. ՕՋԻՋՈՒՄՆ Է ւնուում փոխարէնը ԳՆԵՐԻ ԿԱՕՏՑ ոչ աւելի վճարելը կախված է ՈՒՐՈՒՑՆԵԼ տարեկան 8% վճարելով։ Հարցնել Մխիթարեանց փողոցի վրա № 123 ՏԸՆ տիրոջը կոխայում։
3—8

Дозволено цензурою, Тифлисъ, 9 декабря 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.

Fonds A.R.A.M

№ 227 Դեկտեմբերի 19 (31) 1880 Դեկտեմբերի 19 (31) № 227

ՀՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում պրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Ստորագրությունից գինը մուղկի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Հայտարարութիւն ընդունվում է նամն լեզուով:
Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողի 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 ԹՎԻՆ

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն ձեւով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից):

ՊԱՐՈՒԱԿՈՒՄ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարուան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատում ենք—Ներքին տեսութիւն. Նամակ Նուխուց. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Միջնորդ Դատարան.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Դասիք Բէկ:

ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ

—

Քահանայութիւնից հրաժարեցրած տէր-Յովհաննէս Սարգսեան քահանայի ծուխը դեռ անհամբերութեամբ սպասում է թէ ինչ վճիռ կը տայ Էջմիածնի Մամբրէ վարդապետի արած կամայականութեանը:

Տօն օրերը մօտենում են, ծուխը մնում է առանց քահանայի, երբ սովորաբար ծխատէր քահանան մնում է իր ծխականների անունը և օրհնում է այդ տները:

Թէև լսեցինք, որ Մամբրէ վարդապետը, առանց ծուխի կամքը հարցնելու, կամայական կերպով, ընդդէմ Հայոց լուսաւորչական Եկեղեցու դարաւոր սկզբունքի, տէր-Յովհաննէսի տեղը մի այլ քահանայ է նշանակել, այն է տէր-Գրիգորին, բայց մենք, պատկանելով տէր-Յովհաննէսի ծուխին, մեզ իրաւունք ենք համարում առաջուց հրապարակապէս յայտնել, որ թէև անճնական կերպով ծանօթ ենք տէր Գրիգորի հետ, շատ յարգում ենք նրան, համարում ենք նրան մի պատուական մարդ և մեր երիտասարդ քահանաների թւում լաւերից մէկը, բայց Հայոց լուսաւորչական եկեղեցու բնաորոգական սկզբունքը հաւատարմութեամբ պահպանելու պարտաւորութիւն ունենալով, ստիպված կը լինենք մերժել տէր Գրիգորին մեր տուն մուտքը, երբ նա կը գայ մեզ մօտ տօն օրերին մեր տունն օրհնելու դիտաւորութեամբ: Նա մեզանից ընտրված քահանայ չէ, նա մեզ վրայ նշանակված քահանայ է. իսկ դա բոլորովին հակառակ է լուսաւորչական եկեղեցու օրէնք: Ծուխը մի անշուշտ առարկայ, մի անբան տաւար չէ, որին մի որ և է Մամբրէ կարողանար կամայական կերպով, առանց նրա կամքը հարցնելու, անցկացնել մինի ձեռքից միւսի ձեռքը:

Այս ունենք, որ տէր Յովհաննէսի ծուխին պատկանող մեռացած անդամներն էլ, ով որ ճշմարիտ Հայ-լուսաւորչական է, ուժ որ թաղել է մեր եկեղեցու հնադարեան ընդհանրական սկզբունքը,—ամենքն էլ մեր օրհնակին կը հետեւեն, մեզ պէս կը վարվեն և տօն օրերին կը մերժեն տէր Գրիգորի առջև իրանց անների դռները բաց անելու, թէև անճամբ մենք նրան յարգում և պատուում ենք:

Այն ժամանակ մենք կը տեսնենք թէ ով է աւելի հաւատարիմ մնացել լուսաւորչական եկեղեցու գաւառը ապգային հիմնարկութեան ոգուն, ընդդէմ գանազան բաղդախնդիր Մամբրէների և Մանկունիների հրէշաւոր կամայականութեան՝ — մենք, թէ նրանք, որոնք կրնդունեն տէր Գրիգորին իրանց տանը, այն տէր Գրիգորին, որին մի որ և է Մամբրէ նշանակել է մեր գլխին, առանց մեզ հարցնելու թէ արդեօք կամենում ենք մենք նրան թէ ոչ և արդեօք համաձայն ենք մենք փոխել մեր հին քահանային, որին հրաժարեցրել

ԳԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ե.

Առաւօտ էր. Արեգակի առաջին ճառագայթները կորչում, անհետանում էին մոխրագոյն մառախուղի մէջ, որ պատել էր Ղարադաղի լեռների գագաթները. խիտ անտառները դեռ մրափում էին գիշերային մառլի մէջ. Ծառեր չէին երեում. Սար, դաշտ և հովիտ ընկղմուած էին մի լայնատարած, մառախլապատ ծովի մէջ:

Հեռուից սև բծերի նման երեում էին Զալալիանլիների *) օթաները. Ամէն մի գիւղի հովիտները, առանձին խումբեր կազմելով, տարածել էին իրանց չատրները այդ լեռների ճոխ, խոտաւէտ սրտամարգերի վրա. Մի լեռնադաշտի վրա ցրված էին ցեղի պետի, Ֆաթալի-խանի, չատրները. Նրանք թէ իրանց ձևով և թէ նիւթով, որից պատրաստված էին, զանազանվում էին հասարակ մահկանացուների չատրներից. Նրանք աւելի փառաւոր, բարձր և ընդարձակ էին:

Խանը դեռ քնած էր. Նրա բազմաթիւ կինիկները, վաղուց արդէն զարթնելով, զբաղված էին իրանց անուտութիւնով: Վրանների ստլի, բաց օդի մէջ, օջախները ծխում էին. Այդ օջախների կազմութիւնը խիստ պարզ էր. Հարթ գետնի վրա չորված էին երկաթեայ եռոտանիներ, որոնց տակին կրակ էր վառվում և տաքացնում էր նրանց վրա դրած մեծ և փոքր կաթսաները:

Ամբողջ փայտակարանի բռնապետի կինիկները, որոնք ամեն յարմարութիւն ունէին իրանց տնտեսութեան մէջ բոլոր աշխատութիւնները ստրախիների ձեռքով կատարելու, բայց դարձեալ հաւատարիմ մնալով ազգային սովորութիւններին, իրանց գործը իրանց ձեռքով էին կատարում. Քաղաքակրթութեան բարիքները ազատ էր պահել նրանց ամենախիստ թէ քնքշութիւնից և թէ ծուլութիւնից. Բայց պէտք է նկատել, որ աշխատում էին պառաւները միայն, իսկ աւելի մանկահասակները կամ դեռ քնած էին, կամ զբաղված էին իրանց առաւօտեան զարդարանքով:

Ջատրները, որոնց մէջ զետեղված էր կանանոցը, բոլորովին առանձնացած էին խանի միւս վրաններից. Նրանք թէև քանից աւել կը լինէին, որոնց իւրաքանչիւրը յատկացրած էր նրա կինիկներից մէկի բնակութեան համար. Ագուլցի հայ վաճառականների Սպահանից և Շուղկաստանից բերած թանգագին փարչաները զարդարում էին այդ չքեղ օթեակները, որոնց մէջ ապրում էին երկրի ամենագեղեցիկ կինիկներից ընտրեալները. Ջատրները կիսաթողորակի ձևով չարված էին մինը միւսի մօտ, թողնելով մէջ տեղում հրապարակի նման ընդարձակ տարածութիւն. Խտտերը այդ տարածութեան վրա կոխվելով, բոլորովին սեացել էին և կպել գետնին. Այստեղ խառնափնթոր կերպով չարժվում էր, վըժվըժում էր և խլրտվում էր մի ամբողջ լէգէոն. Այստեղ կարելի էր տեսնել մի բազմութիւն ամեն ազգից և ամեն գոյնի,— սևամորթ և սպիտակամորթ ազատներ, ներքինի ծառաներ, Աֆրիկայի խորքերից բերած և ազատուրներ, խառն ահագին գամփռների և նիհար արտօրեական բարակների հետ պնչուների կատարեալ թաղուն էր դա:

Կանանց հագուստը շատ պարզ էր, երեք կտորից միայն բաղկացած՝—շապիկ, շալվար և թիկնոց. Նախ, թաւմանցիկ կերպասից կարված, կաթլիկ շապիկը հազիւ ազդում էր կիսասյոց կուրծքը և իջնում էր մինչև այտուղ, ուր փորը բաժանվում է մաքսիի մի այլ մասնից: Ձեռոց սկսվում էր շալվարը, որ մեր կանանց խալիկայի տեղ էր ծառայում. Նա կարված էր մետաքսեայ խառայից, զարդարած ոսկէհատ ծաղիկներով և հասնում էր մինչև ծնկները միայն, բոլորովին մերկ թողնելով սրունքների լիքը և հաստլիկ սրունքները *). Շալվարի սոյրին եղերքը, չորս մատ լայնութեամբ, նոյնպէս զարդարած էին ոսկէ թելերով. Շապիկի վրա հագած ունէին կարճլիկ թիկնոցը, որ սեղմված էր մէջքի վրա և մեր կանանց բաւակշիկի ձևը ունէր. Թիկնոցները ըստ մեծի մասին կարված էին թանգագին մանիշակագոյն և վարդագոյն թաւիշից և նախշած զարնատել ոսկէ թելերով. Աղախինները կրում էին իրանց տիկինների հին հագուստը, որոնց մի կամ երկու անգամ էին հագել կարծես, այդ թիթեռների նման նախշուն և խայտաճամուկ արարածները, գեռ նոր էին դուրս եկել մինչ այն դրութիւնից, երբ նա իր մերկութիւնը ծածկում էր թղենու տերեներով. Բայց ոչ, հագուստի այդ ձեր հարեմական ներում, հարեմական հեշտասիրութեան արդիւնք էր, որ երեան էր հանում մերկ կուրծք, մերկ սրունքներ և մերկ բազուկներ. Վնասջ մարմնի այդ մասերը միշտ կարող էին գրգռել վավաշոտ կրքեր, որոնք թաւալցած, բթացած էին հարեմի իշխանի մէջ, որը միայնակ տիրում էր կինիկների մի ահագին երամակի վրա:

Աւելի խորհրդաւոր նշանակութիւն ունէին նրանց միւս զարդարանքները. Թանգագին ակներով զարդարած, պարանոցի մանեակները ունէին իրանց չարքում մի տեսակ, ոսկուց չինած խաղալական թելիսման, որի մէջ գրած էին կախարդական բժժանքներ թէ բազուկների վրա, թէ թևքերի վրա (արմունկներից դէպի վեր) բոլորն էլ ապարանջաններ ունէին, այն զանազանութեամբ, որ թևքերի ապարանջանները կրում էին հագուստի վրայից, իսկ բազուկներինը մարմնի վրա: Բացի դրանից, թևքերի ապարանջանները զարդարած էին գոյնզգոյն յուլունկներով, որոնք դիւթական նշանակութիւն ունէին: Մատանիներին թիւ չը կար, բացի դրանից, բոլորի ոտների մերկ սրունքները նոյնպէս զարդարած էին գոյնզգոյն յուլունկներով. Մի քանիսը ունէին հնամաշ լէչեր, այսինքն ակներից, ոսկուց և մարգարիտներից հիւսված մի զարդ, որ դիներալների ժամանակին նման ձգել էին իրանց ուսից և կապել աջ թևքի տակ. Կիներ, որպէս մի կախարդական էակ, բառի բուն նշանակութեամբ, իր զարդերի մէջն էր ամփոփել իր բոլոր գորութիւնը *). Այդ զարդերը ոչ միայն աւելի փայլ էին տալիս նրա գեղեցկութեանը, այլ պահպանում էին նրան չար աչքից, սիրելի էին կացուցանում նրան իր իշխանի աչքում և ազատ էին պահում միւս կիներների նախանձից ու կենդանի որոգայթներից. Երեք հայ ոսկերիչներ, իրանց աշակերտների հետ, խանի բանակի մէջ,

*) Զալալիանլիների ցեղը մինչև այսօր կայ Ղարադաղի մէջ և յայտնի է որպէս մի վայրենի և աւազակասէր ժողովուրդ. Նրանք կազմում են պարսից հեծելազօրքի քաջ և ամենաընտիր մասը:

*) Լիքը սրունքները գեղեցկութեան մի նշան համարվելով, մահմեդական կիներները արհեստական կերպով հաստացնում են նրանց, վերևից միշտ պինդ կապած ունենալով, և արիւնը քանակաբար հաւաքվելով ոտների տարբեր մասերում, հաստացնում է սրունքները:

*) Պարսից լեզուում ամբողջ գրքեր կան գրված, որոնք բացատրում են այս և այն գոհարի, այս և այն մետալի կախարդական նշանակութիւնը:

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ԴԱՀԻՃԱՊԱՏ ՏԱՐԱՀԱՐԸ

Թ. Ա.

Եկեղեցական պատմական վեպ

Ծանր ըմբռնումներ։ Ա

Ես առանց մեղ չեմ խոստովանում, որ ինձ համար դժվար է սկսել այս պատմությունը։ Ինչպես ամեն մի հեղինակ, որ առաջին անգամ է գրում, ես էլ ինձ համար ընտրել եմ մի նյութ, որ ինձ թվում է հետաքրքրական, և որի մասին ես կարծում եմ, թե ինձ հաջողվելու է ընթերցողի ուշադրությունը գրավել։ Բայց ինչպես ամեն մի հեղինակ, որ առաջին անգամ է գրում, ես էլ ինձ համար ընտրել եմ մի նյութ, որ ինձ թվում է հետաքրքրական, և որի մասին ես կարծում եմ, թե ինձ հաջողվելու է ընթերցողի ուշադրությունը գրավել։ Բայց ինչպես ամեն մի հեղինակ, որ առաջին անգամ է գրում, ես էլ ինձ համար ընտրել եմ մի նյութ, որ ինձ թվում է հետաքրքրական, և որի մասին ես կարծում եմ, թե ինձ հաջողվելու է ընթերցողի ուշադրությունը գրավել։ Բայց ինչպես ամեն մի հեղինակ, որ առաջին անգամ է գրում, ես էլ ինձ համար ընտրել եմ մի նյութ, որ ինձ թվում է հետաքրքրական, և որի մասին ես կարծում եմ, թե ինձ հաջողվելու է ընթերցողի ուշադրությունը գրավել։

28 հունվար

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԵՐԻՑ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԵՐԻՑ

28 հունվար

Պատմական վեպ Եկեղեցական կյանքից։ Ա

Ես առանց մեղ չեմ խոստովանում, որ ինձ համար դժվար է սկսել այս պատմությունը։ Ինչպես ամեն մի հեղինակ, որ առաջին անգամ է գրում, ես էլ ինձ համար ընտրել եմ մի նյութ, որ ինձ թվում է հետաքրքրական, և որի մասին ես կարծում եմ, թե ինձ հաջողվելու է ընթերցողի ուշադրությունը գրավել։ Բայց ինչպես ամեն մի հեղինակ, որ առաջին անգամ է գրում, ես էլ ինձ համար ընտրել եմ մի նյութ, որ ինձ թվում է հետաքրքրական, և որի մասին ես կարծում եմ, թե ինձ հաջողվելու է ընթերցողի ուշադրությունը գրավել։ Բայց ինչպես ամեն մի հեղինակ, որ առաջին անգամ է գրում, ես էլ ինձ համար ընտրել եմ մի նյութ, որ ինձ թվում է հետաքրքրական, և որի մասին ես կարծում եմ, թե ինձ հաջողվելու է ընթերցողի ուշադրությունը գրավել։

Fonds A.R.A.M

«ВѢСТН. Европы» издается ежедневно кромѣ дней послѣ праздниковъ по 8-ми листовъ in 4°

—

Զօրս ուտեր, ըստ ուտող, վատ ուտող, ի ինչ ուտեր, եւ որքան ուտեր, ինչ ուտեր...—Ես ձեզ ասեմ հիմիկուց, թէ ինչ ուտեր, ինչ ուտեր...

Զատկին մեզ, յատուկ սեղան մը կ՚ընեն մեր տունը, ուր ամէն տեսակ ուտելիքներ կը դնեն սեղանին վրայ, ինչպէս ձուկ, միս, ձուկի ուտելիքներ, միսի ուտելիքներ, ձուկ ու միս միասին, ձուկ ու միս առանձին, ձուկ ու միս ոչ միասին ոչ առանձին, ձուկ ու միս ոչ միասին եւ առանձին, ձուկ ու միս միասին եւ առանձին, ձուկ ու միս ոչ միասին ոչ

ՎՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի։ Ա.յսօր ուղևորվեցան Զիկիշլեար 9 ոգորմած քույրեր կրետոզզովիժենսկայա համայնքից։

ՏՈՒԼՈՆ, 17 դեկտեմբերի։ Երկի երեկոյեան վառվեցաւ և ծովի յատակը ընկղմվեցաւ առաջին կարգի „Իշլեո“ զրահակիր նաւը։ Մի քանի մարդ վիրաւորվեցան։

Կ. ՊՕԼԻՍ, 17 դեկտեմբերի։ Կարծում են, որ Բ. Դուբը անպայման չի ընդունի միջնորդ գաւառանի նախագիծը, բայց վերջնականապէս էլ չի մերժի, այլ խաղաղ բնաւորութիւն ունեցող առաջարկութիւններ կանի։

ՓԱՐԻԶ, 16 դեկտեմբերի։ Սենատի և պատգամաւորների ժողովի նիստերը գադաթնցրած են։

ԼՕՆԴՕՆ, 17 դեկտեմբերի։ Օաթինդիայի կառավարութիւնը հրամայված է կապ երկիրը մի գօրաբաժին ուղարկել։ Բօերները գրաւեցին Ռաբեխաս։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի։ „Новое Время“ լրագիրը լսել է, որ փոխծովակալ Շվարց նշանակված է Սև ծովի նաւատորմի գլխաւոր հրամանատար և նիկոլայեվի զինուորական նահանգապետ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Ընդէն վաճառվում է մեծադիր

ՕՐԱՑՈՑ 1881-Թ. Վ.

Սկզբումն գեղաքանդակ պատկերք
Ս. ԱՐԻՍՏԱԿԻՍԻ
բոլոր օրն. հրջ. մկ. հմբ. դրուած են կարգաւ հանդերձ՝

ԾՆՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ

յաւելուածով ա. ա.
սկզբումն է գեղաքանդակ պատկերք
ՍՈՎՆԱԿ ՀԱՑ ԸՆՏԱՆԻՔ
Գինն է մինչև 600 վ. 35 կոպէկ, իսկ նորանից բարձր 40 կ.

Փոքրադիր

ՕՐԱՑՈՑ 1881-Թ. Վ.

Հանդերձ երկու գեղաքանդակ պատկերաւ
ՀԱՑԿԱԶՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՑ
և Ս. Փ. Ր. Հ. եկեղեցին Ս. ԵԿԱՏԵՐԻՆԵԱՑ։
Գինն է 10 կոպ.

Տփխրատը ծախվում է պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում։

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Բաց անելով իր բոլոր արդիւնաբերութիւնների պահեստը միջի փողոցի վրա կաժեղնայա կարգում Քարթվելովի տանը, պատիւ ունի առաջարկել պ. պ. առևտրականներին և գործածողներին ամեն տեսակ պադօշի, ձիու, իւֆտի և օպօյկի ապրանքներ, նոյնպէս և վիտուժկաներ, գալոշկաներ, սիրուհատանի կաշիներ, խամբի և մեքենաների բէմկներ։ Ծախվում են գործարանի գներով։

5—20

Ծախվում է 234 քառակուսի սաժէն ՀՈՂ, ՆԻԿՈԼԱԵՎՍԿՈՅԻՆ փողոցի վրա, ՈՒՍՈՒՑԻ ԵԿԵՂԵՑՈՒՑ ՎԵՐԸ ՌՈՐՔԸ։ Յանկացողները կարող են դիմել ԿԱՕՄՈՐԸՐՍ ԸՐՏՒՄ ԳՈՒԳՈՒԼԵՏՆԵՑԻՆ, ՍՕԼՕԼԱԿԻ փողոց, տուն ՍՈՒՄՄԵՏՏՕՎԻ։

4—4 (2)

Ընկ օրերս դուրս եկաւ մամուլի տակից „Դասագիրք Հայկական Ձայնագրութեան“ Հայ դպրոցների համար, աշխատասիրութեամբ Ս. Գնունի քահանայի Արգինեանց։ Ձիշտ ձևանարկը յօրինված է ամենագիւրին ոճով. բաժանված է դասերի և յատուկ Քաքանի հետ գրուած է դասագրքի նախագիծը և դասատուութեան եղանակը։ Ընդունված է Ներսիսեան դպրանոցում, Գաւիտեանեան և ուրիշ դպրոցներում։ գինն է 30 կոպ. վաճառվում է Զ. Գրիգորեանի „Կովկասեան գրավաճառանոցում“։ Նոյնտեղ վաճառվում է „Լա Մանկական Ձայնագրելու երգարան“ Հայ դպրոցների համար։ գինն է 40 կոպ։ Նաև „Մանկական երգարան“ առանց նօտաների, ստորին դասարանց համար, գինն է 20 կոպ. գումարով առնողներին դիջումն կը լինի։

4—10

ПРОДАЕТСЯ

Посредствомъ **ТИФЛИССКОЙ АУКЦІОННОЙ** камеры 162 ящика **ТАБАКУ и ПАПИРОСЪ съ БАНДЕРОЛЯМИ, ГУРТОМЪ** или **ПОРОЗНЬ**. Продажа имѣетъ быть 18 декабря, съ 10 часовъ утра, **въ СКЛАДѢ бр. ТУТУНОВЫХЪ**, на Садовой улицѣ, домъ № 34.

5—5

Об изданіи въ 1881 году

ГОДЪ **„ДОНСКОЙ ПЧЕЛЫ“** ШЕСТОЙ

ГАЗЕТЫ ПОЛИТИЧЕСКО-ЛИТЕРАТУРНОЙ.

Съ 1-го января 1881 года «Донская Пчела» будетъ издаваться по той-же программѣ, какъ издавалась въ предъидущіе пять лѣтъ, два раза въ недѣлю.

Газета эта въ настоящее время получила такую популярность, особенно въ При-азовскомъ краѣ, что не нуждается ни въ какой рекламѣ.

Подписная цѣна остается прежняя:

Съ доставкою въ Ростовѣ н.-Д.		*Съ пересылкою иногороднымъ.*	
На годъ	6 руб.	На годъ	7 руб.
» 1/2 года	3 » 50 к.	» 1/2 года	4 »
» 3 мѣсяца	2 »	» 3 мѣсяца	2 » 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакціи «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой ул., въ домѣ П. А. Теръ-Абраміанъ. Иногородные благоволятъ адресоваться: въ редакцію «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногородныхъ подписчиковъ прислать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20 декабря настоящаго года подписныя деньги за 1881 годъ, будетъ разосланъ безплатно, въ видѣ преміи «Донско-Азовскій» русско-армянскій календарь на 1881 годъ.

10—10

Ընդունարանի համար Ս. Գրիգորեանցի տակից դուրս եկաւ պ. Ն. Միմիջնորդի աշխատասիրած Հայոց դպրոցների համար ընդհանուր աշխարհագրութեան դասագրքերը, որոնք արդէն ընդունվել են ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և գաւառների հայոց երկսեռ ուսումնարաններում և Ս. Էջմիածնի ճեմարանում։

Դասագրքերը վաճառվում են բացառապէս Աղիկասեան գրավաճառանոցում Ս. Գրիգորեանցից։

Ա. տարի՝ Նախագիտութիւն (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 35 կ.

Բ. տարի՝ մասն ուսումնական և բնական (31 պատկերներով) 60 կ.

Գ. տարի՝ մասն քաղաքական (Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա) 60 կ.

Գումարով առնողին զիջումն կը լինի։

19—20

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԳՐԱՍԵՆԵԿՈՒՄ

Ր. ՇԱՀՎԵՐԴԻԵՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

(Գալվինովի Պրօսպեկտի վրա, Ալեքսանդրեան տաճար տան)

Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ռուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատան յայտնած գներով։ Նոյն տեղերից թող բարեհաճեն դիմել հետևեալ հասցէով.

Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова.

30—21



ԻՒԻՒՈՒՍ ԳՐԵՑԻ ՎԱՀՐԱՄԱՑՆ ՕՒՆԵՑՈՂ, ՄԻՋՈՑ (գեղ) ՈՍԿՐԵՑԱՑԻՒ ԵՒ ՐՆԿՄՏԻՈՂՄԻ դէմ։



Ամենալաւ օգնող միջոց է, որ կարելի է հեշտութեամբ և առանց ցաւի գործ դնել ամեն տեսակ ՈՍԿՐԵՑԱՑԻՒ ԵՒ ՐՆԿՄՏԻՈՂՄԻ դէմ, մանաւանդ մատների և ջղերի ցաւի և մարմնի զանազան մասերի կծկման՝ դէմ, միակողմանի գլխացաւի (միգրէնի) դէմ, գլխի կծկման դէմ և մինչև անգամ ԿՐԿՆԱՎՈՐ ԿԱՐՄՐԻ դէմ, սրտի ափերի և կրծքի բորբոքման դէմ, ըեւմատիզմի հետևանքների դէմ նոյնպէս և արտասահմանեան ջրերից լաւացողների համար։ Վաճառականի միակ տերը Լէյիուս Գրեց, Վիեննա, II Prater strasse № 49, ծախվում է 4 բուրլի գործածութեան խրատներով Ռուսաստանի բոլոր գեղատուներից մէջ։ Գլխաւոր պահեստը Մոսկվայի Ր. կեօլեր և ընկ. խանութի մէջ, Նիկոլսկայա փողոցի վրայ փոստային ծախսի համար 40 կ. է ուղարկվում։

5—25 (3)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի գնաը			1 բ. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ			Ք. 1 բ. 30 կ.
—	—	—	1 բ. 10 կ.	—	—	—	Ք. 1 բ. 40 կ.
—	—	—	1 բ. 20 կ.	—	—	—	Ք. 1 բ. 60 կ.
—	—	—	1 բ. 40 կ.	—	—	—	Ք. 1 բ. 80 կ.
—	—	—	1 բ. 60 կ.	—	—	—	Ք. 2 բ. —
—	—	—	1 բ. 80 կ.	—	—	—	Ք. 2 բ. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 բ. —	—	—	—	Ք. 3 բ.

17—100

Մինչև այժմ չեզած ԿԱՇՆՈՒԻ ԻՒՂ, ԲԺԻՇԿ ՀԱՄՐԻՏԻ, որ կատարելագործված է բժիշկ ՄԱՀՐԻԿԻ ԴԷՑԶԻՑ։ Առողջացնում է ամեն տեսակ ԽՈՒԼՈՒԹԻՒՆ, եթէ նա բնական չէ։ ԵՐԵՔ ՐՈՒԲԼ ըստանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՇԻՇ այդ իւղից, մանրամասն ԽՐՏՆԵՐՈՎ գործածութեան մասին։ Այդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆԵՐԻՑ և Ալեքսանդր Վ. ՆՑԵԼԻՑ, կազանսկայա փողոց № 3։

5—50

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ։ 50-ից մ պակաս մահճակալներ պատուիրող վաճառականներին Մեծ զիջումն է լինում։

8—9

ԱՄԵՆԱՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԼԹ 1 բ. 20 կ. մինչ 2 բ. Փոստը ամենալաւը, ստացված է անգլիական խանութի մէջ։ Նոյն տեղը ստացված են մեծ քանակութեամբ գեղին մահճակալներ և ուրիշ առարկաներ։

5—10

ՆՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱԹԻ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ Հարմար փափուկ և ձգուն նահալիներով։ Օրինակները կարելի է տեսնել Կաղանդուհնայա փողոցի վրա, տուն Գրգուռեանցի, Աօնատանտինօվսկի բնակարանի մէջ, Մօսկվայի „Նիկօլայ Ընդհ.“ գործարանի հաւատարմատար Իվ. Պետր. Պետրօվի մօտ։ Մի և նոյն տեղը ընդունվում են Հրգեհապահ մեքենաների և ուրիշ ապրանքներ։

Дозволено цензурою, Тифлисъ, 18 декабря 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.

Fonds A.R.A.M

№ 231 Դեկտեմբերի 25 1880 Դեկտեմբերի 25 № 231

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:
Բաժանորդագրութիւն ընդունւում է ամեն ժամանակ:
Ծանուցմունքերի համար վճարում են
յուրաքանչիւր տողի 2 կոպէկ:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Տարեգրութիւնները ընդունվում են միայն հետևեալ հասցէով.
Тифлисъ. Редакція «Мшакъ»

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 ԹՒԻՆ

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետևեալ օրերից):

ԳՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Աւագնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանաստեղծական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլի, կէս տարվան 6 ր., հինգ ամ. 5 ր., չորս ամ. 4 ր., երեք ամ. 3. ր. երկու ամ. 2 ր. և մի ամ. 1 րուբլի:

Դրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհատապաի է.—Ներքին տեսութիւն, Ֆիլօկսէրայի մասին, Նամակ Սրեանից, Ներքին լուրեր.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանաստեղծական. Դասիք բէկ.

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ Է

Լուր տարածվեցաւ, որ Էջմիածնից մասամբ ներեց Տէր-Յովհաննէս քահանային, կրկին թոյլ տուեց նրան փիլօն ծածկել, բայց բոլոր արարողութիւններից

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ԳԱՍՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Զ.

Դուրս գալով Սիւրիի վրանից, Ահմէդը դիմեց դէպի մի վրան, որ բաւական հեռու էր կանանոցից և գտնվում էր անտառի խորքում. Այստեղ կային մի քանի ուրիշ վրաններ ևս, որ յատկացրած էին իսկի Թիկնապահներին և նրա ծառաներին: Մի մարդ կէս ճանապարհի վրա կանգնած, սպասում էր նրան. երբ տեսաւ ներքինուն, մօտենալով հարցրեց.

—Ի՞նչ եղաւ....

Ահմէդը պատմեց նրան, թէ ինքը ամեն հնար գործ դրեց, աղաչեց, պաղատեց, ուրբ համբուրեց, բայց տիկինը ասում է.—չէ ու չէ, չեմ ուզում անմնվել նրա հետ:

—Նա չէ ուզում անմնվել իր հօր հետ... շատ լաւ... խորին դառնութեամբ կրկնեց Ահմէդի հետ խօսող մարդը և դիմեց դէպի այն վրանը, ուր նրան իջևան էին տուել:

Ահմէդը սառած կանգնել, երկար նայում էր նրա ետևից, երբ նա բոլորովին աչքից հեռացաւ, ներքինին դուխը չարժելով, ասաց իր մտքումը.—քեզ նման հայրը արժան չէ այնպիսի զաւակի երեսը տեսնելու....

Այդ մարդը Սիւրիի հայրն էր, Տաթևի մէլիք Դաւիթ «ուրացողը», որ Թուրքի անունով իրան Բաղր էր կոչում: Մի ժամանակ նա Տաթևի մէլիք Գիւլամբարի մօտ գըգիրի և լրտեսի պաշտօն էր կատարում և շատ սիրելի էր նրան, վերջը կամենալով իր բարերարի տեղը գրաւել, Թունատրեց նրան, և իր աղջիկը կաշառք տալով խանին, ոչ միայն կարողացաւ ազատվել այդ չարագործութեան համար պատժվելուց, այլ իր տեղի փոխարէն ժառանգեց Տաթևի մէլիքութիւնը:

Բռնութեամբ, դաւաճանութեամբ և եղեռնագործութեամբ յափշտակված իշխանութիւնը բոլորովին անատանելի դարձաւ Տաթևի հայ ժողովրդին, առաւել այն պատճառով, որ Դաւիթը խանին աւելի հաճոյանալու համար փոխեց իր կրօնը: Այս պատճառով «ուրացողը» անբաւական ժողովրդին իր ճնշման տակ պահելու համար ստիպված էր այնուհետև միշտ նորանոր միջոցներ հրնարել խանի սիրտը գրաւելու և նրա պաշտպանութիւնը վայելելու համար, որպէս զի նրա օգնութեամբ կարողանայ պահպանել իր իսկական դիրքը:

Միջակ հասակով մարդ էր նա, մի տգեղ կազ. երեսը կապիկի դէմքի նմանութիւն ունէր, մազով պատած մինչև աչքերի կոպերը: Եթէ հաւատանք ժողովրդական կարծիքին, թէ «չօլոխ» մարդիկը վատամազ (հնարագէտ) կը լինեն,—պէտք է ընդունենք, որ Դաւիթը մարմնացած խորամանկութեան ճիշտ տիպարն էր: Դա այն տեսակ մարդիկներից էր, որոնց մասին ասում են, թէ սատանայից հօթն օր առաջ են ծնվել:

Բայց այդ մարդը, որ ոչ տխրել, ոչ յուսահատվել և ոչ բարկանալ գիտէր, այդ մարդը, որ ոչ մի անապատութեան, ոչ մի դժուարութեան դէմ իր կեանքում չէր դողացել,—ներքինու խօսքերը լսելուց յետոյ, մի խեղդէն ամանի նման, կարծես, փչրվեցաւ: Չարագոյն աղջիկը դղմում էր տեսնել նրա երեսը: Դա մի սարսափելի հարուածք էր: Աշխարհից արհամարհված, հազարաւոր թշուառների անէծքով դատապարտուած մարդը միշտ ոչինչի տեղ էր դնում իր գոհերի լացը, ատնջանքը և արիւնը... բայց աղջկայ բողքը ազդեց նրա վրա: Տատանվելով չարունակում էր նա իր անհատնում քայլերը դէպի իջևանը, որ դեռ բաւական հեռու էր: Ձանապարհը ընկած էր ռանակոխ եղած խոտաբոյսերի միջով, որ ձևացնում էր մի օձապտոյտ շաւիղ: Թուշունները չորս կողմում չըկչկում էին, բայց նա ոչինչ չէր լսում: Արեգակի վառ ճառագայթների մէջ անտառի ծառերը նկարվում էին իրանց բոլոր գեղեցկութեամբ, բայց նա ոչինչ չէր տեսնում: կարծես, ամեն զգացմունք, ամեն կիրք ապտնված լինէին նրա սրտում: Նրա ուղեղը այդ միայն մի խորհուրդ իրաւունք տուեց կատարելնրան, այն է խոստովանեցնել իր ծխականներին:

Մենք հրաժարվում ենք հաւատալ այդ տեսակ անճոռնի կարգադրութեանը, այն աստիճան հրէշաւոր ենք համարում նրան: Եթէ քահանան արժանի է խոստովանեցնել, այն ժամանակ նա արժանի է և պահք և մկրտութիւնը և այլն կատարել: Իսկ եթէ քահանան անարժան է կատարել ամեն արարողութիւնները, ի՞նչպէս կարող է հաւատալ նրան իր սրտի խորհրդները, խոստովանվել անարժան մարդու առջև: Ահա էջմիածնի լոգիկան:

Բայց այստեղ մի ուրիշ դատողութիւն կայ: Խոստովանութիւնը ոչինչ նիւթական արդիւնք չէ տալիս, ուրեմն այդ անշահաւէտ գործը կարելի է յանձնել Տէր-Յովհաննէսին ոտն օրերին, իսկ մեռցած արարողութիւնները շահաւէտ են, ուստի Տէր-Գէորգը և Մամբրէ վարդապետը կարող են

բռնակեմ այն աստիճան խառնաչփոթութեան մէջ էր, որ անկարող էր իր մտածութիւնները որևէ կարգի դնել: Նա ասելու շատ բաներ ունէր իր աղջկան, նա իր նպատակները իրագործելու համար յոյս էր դրած աղջկայ աջակցութեան վրա: Բայց բոլորը քանդվեցաւ: կամ այսօր պէտք էր յայտնվելնէլ, կամ ամեն ինչ կորած էր յաւիտեան...

Ահմէդի դառն և յուսահատ մտածութիւնների մէջ գնում էր նա, յանկարծ թուփերի միջից դուրս եկաւ նրա առջև մի մարդ, որը սպասում էր նրան:

—Բարի լինի... խօսեց մէլիքը հարցական հայեացքով նայելով նրա երեսին:

—Կարող էր բարի լինել, բայց... անծանօթը չատարեց խօսքը, սկսեց աչք ածել իր շուրջը, զգուշանալով, մի գուցէ մի ուրիշ լսող լինէր:

—Ուրեմն ոչինչ չը շինեցիք... հարցրեց մէլիքը անհամբերութեամբ:

—Ոչինչ... և անկարելի էր մի բան անել...

—Ի՞նչու...

Անծանօթը սկսեց հազիւ լսելի ձայնով պատմել, թէ ինքը ամեն հնարներ գործ դրեց, բայց չը յաջողվեցաւ... Ալի օրից, որ գերիները բերված են, ասաց նա, խանումը (խօսքը Սիւրիի մասին էր) մի առանձին խնամքով հոգ է տանում նրանց վրա: Իրան կասկածելի չանելու համար, խանումը իր հոգատարութիւնը ծածուկ յանձնել է Ահմէդ ներքինապետին: Այդ ծերունի ազուէսը այն աստիճան խորամանկ է, որ սատանային անգամ կը նայէ, որ ոչինչ չի դղայ: Նա խանումին կուռքի նման պաշտում է: Եթէ խանումը ասէ՝ գնա ջուրի կամ կրակի մէջ ընկիր, նա առանց ծպտուն հանելու, կը կատարէ: Ահմէդը ոչ միայն կերակրում էր գերիներին, այլ գիչերները այցելում էր նրանց մօտ և պահապաններ էր նշանակում հսկելու, որ նրանց գրլխից ոչ մի մազ չը պակսի: Անկարելի էր նրանց մօտ մտնել: Պահապանները բոլորը Ահմէդի մարդիներն էին, հազար թումանի համար նրան չեն դաւաճանի: Բացի դրանից, Ահմէդը խանի մօտ մեծ նշանակութիւն ունի, բոլորը նրանից վախենում են:

իրանց մէջ արդիւնքը բաժանել ոտն օրերին, աչքի առաջ ունենալով, որ Տէր-Յովհաննէսի ծուխը Թիֆլիսի ամենահարուստ ծուխն է, գուցէ իրանց արդիւնքի մի մասն էլ Մանկունուն կուղարկեն մի որ և է ընծայի ձևով:

Ահա մեր ժամանակակից հոգևորականութիւնը, ահա այն եկեղեցական կազմակերպութիւնը, որ մեր խաւարասէրների ասածով, մեր ազգութեան գոյութեան նեցուկ է:

Ու ինչ իրաւունքով ծուխից խլում են նրա ընտրված քահանային և նշանակում են առանց ծուխի կամքի մի ուրիշին:

Քահանան մի պօլիցիական պաշտօնեայ չէ, որի հետ քաղաքացին ունի միայն պաշտօնական, ձևական յարաբերութիւններ, քահանան մարդու հոգևոր խորհրդատու է, որի հետ մարդը ունի միմիայն բարոյական յարաբերութիւններ, այդ պատճառով մարդը ինքն պէտք է ընտրի իր համար այն քահանային, որի

Որքան առաջ էր գնում անծանօթը իր պատմութեան մէջ, մէլիքի դէմքը աւելի և աւելի մրայլվում էր, նրա ցրիոնքը դողդողում էր և աչքերում վառվում էր կատաղութեան կրակը: Անիրաւ աղջիկը հասցրեց նրան երկարող հարուածը և այդ աւելի տապալ էր: Նա զրկեց հօրը իր թանգագին յոյսերից. նա ոչնչացրեց հօր բոլոր պլանները, որ այնքան մեծ աշխատութեամբ յօրինել էր նա....

—Շնորհակալ եմ, Ցիւսէյն, խօսեց մէլիքը զսպելով իր բարկութիւնը,—դու դարձեալ արել ես, ինչ որ կարող էիր անել, եթէ չը յաջողվեցաւ, դրանում դու մեղաւոր չես: Ես դարձեալ կը տամ քեզ այն, ինչ որ խոստացել եմ:

